

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
«Դ Ի Զ Ա Յ Ն» ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
Ծրագրի մասնագիր**

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Դիզայն 021201.00.6
2. Բուհը	Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	Արվեստի
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	բակալավր 2025/26
6. Ուսումնառության լեզուն	Գրական հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները

Դիմորդը պետք է ունենա.

- Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության վկայական,
- Կամ նախնական մասնագիտական կրթության վկայական, որում կա գրառում դիմորդի՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ստանալու վերաբերյալ,
- Կամ միջին մասնագիտական կրթության վկայական,

Դիմորդը հանձնում է ընդունելության քննություններ հետևյալ առարկաներից՝ «Գծանկարչություն», «Կոմպոզիցիա»:

Ընդունելությունը կատարվում է ԵՊՀ ԻՄ–ում հանձնած ընդունելության ներբուհական քննությունների արդյունքների հիման վրա:

9. Ծրագրի նպատակները

- Պատրաստել բարձր որակավորման բակալավր–մասնագետներ, ովքեր իրերի նախագծման պրոցեսում տիրապետում են արդի ստեղծագործական մտածելակերպի և համակարգչով դիզայն ծրագրերի կատարման հմտությունների, հագուստի նախագծման և մոդելավորման հմտությունների:
- Ուսանողների համար ապահովել կրթական միջավայր և տեսական և գործնական դասընթացների շնորհիվ շրջանավարտների մոտ ձևավորել գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են մասնագիտական ոլորտում հաջողությունների հասնելու, ուսանողների գեղագիտական, ինտելեկտուալ, վերլուծական և կատարողական կարողությունների զարգացման համար:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Ա1. Միջավայրի, արդյունաբերական և հագուստի դիզայնի խնդիրների լուծման ընթացքում ցուցաբերելու գեղագիտության, արվեստի և դիզայնի տեսության ու պատմության իմացություն:

Ա2. Ներկայացնելու դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունները, տեսությունները և մեթոդները առաջադեմ գիտելիքների հետ միասին:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Բ1. Ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում և առաջարկելու ինքնուրույն լուծումներ միջավայրի, արդյունաբերական կամ հագուստի դիզայնի նախագծերի մշակման ժամանակ՝ հաշվի առնելով դիզայնի ոլորտում եղած ժամանակակից միտումները և սպառողի (պատվիրատուի) պահանջները:

Բ2. Ստեղծելու և վերարտադրելու վիզուալ ուղերձներ՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ և գործիքներ /գծագրություն, հեռանկար, մանրակերտի ստեղծում, ժամանակակից

տառատեսակներ, լուսանկարչություն, եռաչափ մոդելավորում/: Բ3. Ինքնուրույն ընտրելու դիզայն նախագծի տեխնիկական հաշվարկի եղանակներ և հիմնավորելու դրանք կիրառելով դիզայնում կոմպոզիցիայի վիզուալ կազմակերպման, ծավալագույացման, ֆունկցիոնալ վերլուծության, նյութերի և դրանց արտադրության, գունանկարչության, գծանկարչության, գունատեսության, էրգոնոմիկայի, բիոնիկայի և արխիտեկտոնիկայի սկզբունքները: Բ4. Մակետավորման և մոդելավորման աշխատանքներում արհեստավարժ կիրառելու քանդակի սկզբունքները և հնարները: Բ5. Դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների և մեթոդներ և առաջադեմ գիտելիքների հետ միասին կիրառելու սեփական գործունեությունը կազմակերպելու և մասնագիտական խնդիրները լուծելու կարողություն: Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ: Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Գ6. Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար: Գ7. Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն: Գ8. Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար: Գ9. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:
--

11. Ծրագրի ուսումնական պլանը
Կցված է

12. Ուսումնական պլանի քարտեզը
Կցված է

13. Տեղեկատվություն գնահատման կարգի վերաբերյալ
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ, էջ 7-13:

14. Ապագա կարիերայի հնարավորությունները

«Դիզայն» կրթական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել մշակույթի բաժիններում, գեղագիտական կենտրոններում, պետական և մասնավոր հաստատություններում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները.

- ուսումնական վարպետներ, մասնագետ-խորհրդատուներ,
- ներքին միջավայրի ձևավորման մասնագետներ (ինտերիեր),
- արտադրական/արդյունաբերական ոլորտի դիզայներ,
- համակարգչային-գրաֆիկական դիզայներ,
- տպագրության ոլորտի մասնագետ,
- հագուստի/դեկորացիաների ձևավորման մասնագետ,
- ոճաբան,
- նկարիչ-ձևավորող:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսներ և ձևեր (եթե կան)

Ուսումնառության գործընթացում օգտագործում են հետևյալ օժանդակ ռեսուրսները.

- գիպսե, պլաստմասե ռեկվիզիտներ նախադրումների համար,
- մոլբերտներ և գծագրական վահանակներ,
- կարի մեքենաներ,
- խեցեգործության և քանդակի համար նախատեսված սեղանիկներ,
- մուֆելային վառարան,
- համակարգիչներ,
- գունավոր բազմաֆունկցիոնալ տպիչ/ներ,
- 3Դ տպիչ,
- պրոյեկտոր,
- մանեկեններ,
- երկաթյա սեղաններ,
- էտյուդնիկներ,
- մանրակերտեր պատրաստելու համար նախատեսված,
- նյութեր/սարքավորումներ:

16. Համապատասխան կրթական չափորոշիչները կամ առարկայական կողմնորոշիչները.

ԵԳՊԱ «Դեկորատիվ-կիրառական արվեստ» մասնագիտության կրթական ծրագիր

ՀՊՄՀ-ի համապատասխան կրթական ծրագրեր

ՌԴ Գժելի պետական համալսարանի Դեկորատիվ-կիրառական արվեստ և դիզայն մասնագիտության կրթական ծրագիր

Կազանի դաշնային համալսարանի Դեկորատիվ-կիրառական արվեստ և դիզայն մասնագիտության կրթական ծրագիր

Սանկտ Պետերբուրգի Արդյունաբերական տեխնոլոգիաների և դիզայնի համալսարանի դիզայն մասնագիտության կրթական ծրագիր

Հարավային Ուրալյան պետական համալսարանի Դիզայնի և կերպարվեստի մասնագիտության կրթական ծրագիր

17. Ծրագրային այլ կողմնորոշիչներ

2023 թվականից, մասնաճյուղում իրականացվող «Դիզայն» կրթական ծրագրով, 7-րդ կիսամյակում նախատեսվում է «շաբաթական պատուհան» 15 կրեդիտ արժեքով, որոնք ուսանողները կարող են հավաքել ինչպես Մասնաճյուղի հարակից ծրագրերից, այնպես էլ այլ բարձրագույն ուսումնական հաստատություններից: 8-րդ կիսամյակում ևս նախատեսվում է դասապրոցն 4 շաբաթ տևողությամբ:

Բուհում ստացած կրթությունը թույլ կտա ծրագրի շրջանավարտներին լինել տեղեկացված դեկորատիվ-կիրառական արվեստի ժամանակակից ուղղությունների և զարգացման միտումների վերաբերյալ, կողմնորոշվել ապագա կարիերայի հարցերում և լինել մրցունակ և պահանջված ազգային և տարածաշրջանային աշխատաշուկայում:

18. Պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող պահանջներ

**ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՀԱՆՋՆԵՐ**

1. Ընդհանրական կարողություններ

Դասավանդման/մանկավարժական

- Դասընթացի ուսումնական առարկայական ծրագիր կազմելու կարողություն:
- մեթոդական պատրաստություն՝ դասավանդման, գնահատման ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների տիրապետում:
- դասընթացի կրթական վերջնարդյունքների, նպատակների և խնդիրների հստակ գիտակցման ու պարզաբանման կարողություն,
- ուսանողների ակտիվության խրախուսման և մոտիվացնելու կարողություն,
- ընդհանուր նպատակ սահմանելու և դրա իրականացման ուղղությամբ ջանքերը համատեղելու հմտություն
- ուսանողների հետ անհատական աշխատանք կատարելու կարողություն
- ուսանողներին վերլուծական հմտությունները զարգացնելու, փաստերն ու իրողությունները ընդհանրացնելու, երևույթները համակողմանիորեն գնահատելու, տեսական եզրակացություններ կատարելու կարողությունների ներդրման ձգտման առկայություն

Հետազոտական

- Հետազոտական աշխատանքների իրականացման հմտություն:
- մանկավարժական դիագնոստիկական գործառնությունների տիրապետում:
- բաց նոր գաղափարների և հեռանկարների համար
- ինտերդիսցիպլինար և համալիր հետազոտությունների մեթոդաբանության, մացություն և իրականացման հմտություն
- դասավանդման, հետազոտությունների իրականացման ուսումնասիրության մեթոդների ճիշտընտրության և կիրառման հմտություն

Հաղորդակցման

- Ուսանողի հետ միջանձնային հարաբերությունների հաստատման և կառուցողական փոխառնչություններ կառուցելու կարողություններ:
- դասընթացը և դասապրոցեսը պլանավորելու, լսարանը կառավարելու կարողություններ:
- առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

S2S կիրառություն

- Բազային համակարգչային (MS Office փաթեթի ազատ տիրապետում՝ Word, Excel, Power-Point) հմտություններ:
- Լուսացուցադրություններ պատրաստելու և ներկայացնելու կարողություն (pptx, prezi, canva կամայլ):

Այլ

- Մանկավարժական էթիկայի կանոնների տիրապետում:
- Բարձրագույն կրթության ոլորտի իրավական նորմերի իմացություն և կիրառման կարողություն:

2. Մասնագիտական կարողություններ

- Դասավանդման ոլորտի հիմնախնդիրների և մեթոդաբանական հիմքերի տիրապետում:
- Դասավանդման գործունեության հիմքում ընկած դասընթացի հիմնական հասկացությունների, հայեցակարգային մոտեցումների, տեսակետների սահմանման կարողություն՝ հաշվի առնելով լսարանի առանձնահատկությունները:
- Ուսուցման գործընթացում ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման կարողություն:
- Ուսուցման գործընթացում միջառարկայական կապեր ստեղծելու կարողություն:
- Դասավանդվող առարկայի ոլորտում խնդիրներ ձևակերպելու, անհրաժեշտ նյութեր և ուսուցման միջոցներ ընտրելու կարողություն:
- Առցանց ձևերով, լուսացուցադրությունների և այլ եղանակներով ուսումնական նյութեր պատրաստելու և ներկայացնելու կարողություն և հմտություն:

- Ոլորտի մեթոդական առաջավոր փորձի իմացություն և ստեղծագործական կիրառմանկարողություն:
- Կրթական ծրագրի վերջնարդյունքներին առարկայական/մոդուլային ծրագրերի վերջնարդյունքները համապատասխանեցնելու կարողություն:

3. Ընդհանուր պահանջներ

Գիտական աստիճան և կոչում

- Որակավորման կամ գիտական աստիճանի առկայություն դասավանդվող առարկայի/մոդուլի ոլորտում:
- Գիտական կոչման առկայություն /ցանկալի է բակալավրատում, պարտադիր՝ մագիստրատուրայի համար / :
- Հետազոտական աշխատանքների առկայություն մանկավարժության կամ դասավանդողառարկայի/մոդուլի ոլորտում:
- Մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովներին:

Մանկավարժական փորձ

- Գիտական կամ մանկավարժական աշխատանքի փորձառություն (նվազագույնը 3 տարի):
- Պաշտոնի անձնագրով զբաղեցող պաշտոնին (դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր) ներկայացվող
- Մասնակցություն որակավորման բարձրագույն դասընթացներին վերջին 5 տարիների ընթացքում:

Պրակտիկ աշխատանքի փորձ/ցանկալի է/

- Մասնագիտական գործունեության փորձառություն:

Այլ պահանջներ

- Առցանց ուսուցման տեխնոլոգիաների տիրապետում:
- Դասապրոցներ Moodle ծրագրով իրականացում:

Պետք է նկատի ունենալ, որ ծրագրի մասնագիրը տալիս է ծրագրի հիմնական բնութագրերի համառոտ նկարագրությունը և այն կրթական վերջնարդյունքները, որոնք ենթադրվում է, որ ձեռք կբերի ուսանողը, եթե նա լիարժեք կերպով օգտվի ծրագրի ընձեռած ուսումնառության հնարավորություններից: Ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել ԵՊՀ ԻՄ կայքէջում:

«ԴԻԶԱՅՆ» ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԴՐՅՈՒՆՔՆԵՐԸ

Ա. Գիտելիք և իմացություն			
Ա1	Միջավայրի, արդյունաբերական և հագուստի դիզայնի խնդիրների լուծման ընթացքում ցուցաբերել գեղագիտության, արվեստի և դիզայնի տեսության ու պատմության իմացություն:		
Ա2	Ներկայացնելու դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունները, տեսությունները և մեթոդները՝ առաջադեմ գիտելիքների հետ միասին:		
Բ. Գործնական մասնագիտական կարողություններ		Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ	
Բ1	Ցուցաբերել ստեղծագործական մոտեցում և առաջարկել ինքնուրույն լուծումներ միջավայրի, արդյունաբերական կամ հագուստի դիզայնի նախագծերի մշակման ժամանակ՝ հաշվի առնելով դիզայնի ոլորտում եղած ժամանակակից միտումները և սպառողի (պատվիրատուի) պահանջները:	Գ1	Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:
Բ2	Ստեղծել և վերարտադրել տեսապատկերային միջոցներ (տեսապատկերային գովազդներ)՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ և գործիքներ /գծագրություն, հեռանկար, մանրակերտի ստեղծում, ժամանակակից տառատեսակներ, լուսանկարչություն, եռաչափ մոդելավորում/:	Գ2	Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ:
Բ3	Ինքնուրույն ընտրել դիզայն նախագծի տեխնիկական հաշվարկի եղանակներ և հիմնավորել դրանք՝ կիրառելով դիզայնում կոմպոզիցիայի վիզուալ կազմակերպման, ծավալագոյացման, ֆունկցիոնալ վերլուծության, նյութերի և դրանց արտադրության, գունանկարչության, գծանկարչության, գունատեսության, էրգոնոմիկայի, բիոնիկայի և արխիտեկտոնիկայի սկզբունքները:	Գ3	Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
Բ4	Մակետավորման և մոդելավորման աշխատանքներում արհեստավարժ կիրառել քանդակի, գծանկարչության և գունանկարչության սկզբունքները և հնարները:	Գ4	Մտանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:
Բ5	Դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդներ և առաջադեմ գիտելիքների հետ միասին կիրառելու սեփական գործունեությունը կազմակերպելու և մասնագիտական խնդիրները լուծելու կարողություն:	Գ5	Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

Գ6	Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:	Գ7	Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:
Գ8	Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:	Գ9	Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:

«ԴԻՋԱՅՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ

Կրթական մոդուլի անվանումը	Ամբիոնի կոդը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները															
		Ա 1	Ա2	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7	Գ 8	Գ 9
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ /ՊԱՐՏԱԴԻՐ/																	
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	030 2									x		x					
Հայոց լեզու և խոսքի մշակույթ -2	030 2									x		x					
Հայոց պատմություն-1	030 4								x	x	x	x					
Հայոց պատմություն-2	030 4								x	x	x	x					
Անգլերեն/ Ֆրանսերեն/ Վրացերեն- 1	030 5									x	x						
Անգլերեն/ Ֆրանսերեն/ Վրացերեն- 2	030 5									x	x						
Ռուսաց լեզու -1	030 5									x	x						
Ռուսաց լեզու -2	030 5									x	x						
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակ- ներում բնակչության առաջին բուժօգնություն	000 1														x		
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	010 5			x					x								
Փիլիսոփայություն	030 4	x		x					x	x	x	x					
Ֆիզդաստիարակություն	000 1										x				x		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ /ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ		Ա 1	Ա2	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7	Գ 8	Գ 9
Տնտեսագիտության հիմունքներ	020 1			x					x	x		x					x
Գործարարության հիմունքներ	020 1			x	x			x	x	x		x					x
Իրավունքի հիմունքներ	030	<u>8</u>							x	x		x	x			x	x

	4																
Քաղաքագիտության հիմունքներ	030 4								x	x		x	x			x	x
Կրոնագիտության հիմունքներ	030 4	x							x	x		x	x			x	x
Մշակութաբանության հիմունքներ	020 2	x							x	x		x	x			x	x
Հոգեբանության հիմունքներ	030 3								x	x		x	x			x	x
Տրամաբանության հիմունքներ	030 4		x					x	x	x		x	x			x	x
Բարոյագիտության հիմունքներ	030 3								x	x		x	x			x	x
Սոցիոլոգիայի հիմունքներ	030 3							x	x	x		x	x			x	x
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	010 5			x					x	x		x	x			x	x
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	010 4				x				x	x		x	x			x	x
Կիրառական վիճակագրություն	010 4							x	x	x		x	x			x	x
Մաթեմատիկայի հիմունքներ	010 5							x	x	x		x	x			x	x
Հաղորդակցման հմտություններ	030 2								x	x		x	x			x	x
Քննական և ստեղծագործական մտածողություն	030 4							x	x	x		x	x			x	x
Մեդիագրագիտություն	030 2							x	x	x		x	x			x	x
Ռուսաց լեզու-3	030 5								x	x		x	x			x	x
Անգլերեն-3	030 5								x	x		x	x			x	x
ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ /ՊԱՐՏԱԴԻՐ		Ա 1	Ա2	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7	Գ 8	Գ 9
Նկարչություն-1	040		x	x	x	x	x	x				x	x				

	3																
Գծագրություն և հեռանկար	040 3		x	x	x	x	x	x									
Պլաստիկ անատոմիա	010 5			x	x												
Գունատեսություն	040 3	x	x	x	x	x		x									
Նկարչություն-2	040 3		x	x	x	x	x	x								x	
Նյութերի տեխնոլոգիա	040 3		x		x	x		x									
Բիոնիկա և արխիտեկտոնիկա	040 4	x	x	x	x	x		x					x				
Կոմպոզիցիայի հիմունքներ	040 4		x	x	x	x		x					x				
Նկարչություն-3	040 3		x	x	x	x	x	x					x				
Արվեստի պատմություն-1	020 2	x		x									x				
Համակարգչային գրաֆիկա և եռաչափ մոդելավորում -1	040 3	x	x	x	x	x		x					x				
Օրնամենտալ ոճավորում	040 4		x			x		x					x				
Նկարչություն-4	040 3		x	x	x	x	x	x					x			x	x
«ՀԲ» Արվեստի պատմություն-2	020 2	x		x									x				
Համակարգչային գրաֆիկա և եռաչափ մոդելավորում -2	040 3	x	x	x	x	x		x					x				
Նկարչություն-5	040 3		x	x	x	x	x	x					x				
Համակարգչային գրաֆիկա և եռաչափ մոդելավորում -3	040 3	x	x	x	x	x		x					x				
Քանդակագործություն	040 3		x	x		x	x	x									
Դիզայնի պատմություն	040 4	x	x		x	x		x									

Նկարչություն-6	040 3		x	x	x	x	x	x					x			x	
Համակարգչային գրաֆիկա և եռաչափ մոդելավորում -4	040 3	x	x	x	x	x		x								x	
Նկարչություն-7	040 3	x	x	x	x	x		x								x	
Բրենդավորում	040 4		x		x	x		x								x	
ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ /ՀԱՏՈՒԿ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ-1/		Ա1	Ա2	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7	Գ8	Գ 9
Դիզայն նախագծում -1	040 4	x	x	x		x	x	x	x	x	x	x					
Ինտերիերի և էքստերիերի դիզայն	040 4	x		x	x	x	x	x	x	x	x	x					
«ՀԲ» Դիզայն նախագծում -2	040 4	x	x	x		x	x	x	x	x	x	x					
Մակետավորում-1	040 3	x	x	x	x	x	x	x	x	x	x	x					
Դիզայն նախագծում -3	040 4	x	x	x		x	x	x	x	x	x	x					
Մակետավորում-2	040 3	x	x		x	x	x	x	x	x	x	x					

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ /ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ-2/		Ա 1	Ա 2	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7	Գ8	Գ9
«ՀԲ» Հագուստի մոդելավորում և նախագծում-1	040 4	x	x	x		x	x	x	x	x	x	x					
Տարազի պատմություն	040 4	x		x		x			x	x	x	x					
«ՀԲ» Հագուստի մոդելավորում և նախագծում-2	040 4	x	x	x		x	x	x	x	x	x	x					
Աշխատանք նյութի վրա-1	040 4	x	x	x	x	x	x	x					x				
Հագուստի մոդելավորում և նախագծում-3	040 4	x	x	x		x	x	x					x				
Աշխատանք նյութի վրա-2	040 4	x	x		x	x	x	x					x				
ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՄՈՂՈՒԼՆԵՐ		Ա1	Ա2	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7	Գ8	Գ 9
Ուսումնական պրակտիկա	040 4			x				x		x	x		x	x		x	x
Մասնագիտական պրակտիկա-1	040 4			x		x		x		x	x						x
Ավարտական աշխատանք	040 4	x	x	x	x	x		x								x	
Մասնագիտական պրակտիկա-2	040 4			x		x		x		x	x					x	x

ԱՌԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՍԲ «ԴԻԶԱՅՆ» ԲԱԿԱԼԱՎՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Թվանիշ	Ուսումնական մոդուլի անվանումը	Կրեդիտ-ներ	Ուսումնական բեռնվածությունը, ժամ						Կիսամյակներ																Գնահատման ձևեր
									1		2		3		4		5		6		7		8		
			Ընդ.	Լս.ժ	Դիս.	Գրծ./Մեմ.	Լաբ.	Ինք.	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	Կրդ.	Լս.ժ	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ՊԱՐՏԱԴԻՐ)	27	810	390	165	22 5	0	420	6	6	6	6	6	6	6	6	3	2	0	0	0	0	0	0	
Պարտադիր դասընթացներ		23	690	330	105	22 5	0	360	6	6	6	6	4	4	4	4	3	2	0	0	0	0	0	0	
1	Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	2	60	30	0	30	0	30	2	2															Ստ.
2	Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	2	60	30	0	30	0	30			2	2													Ստ.
3	Հայոց պատմություն-1	2	60	30	15	15	0	30					2	2											Ստ.
4	Հայոց պատմություն-2	2	60	30	15	15	0	30							2	2									Ստ.
5	Անգլերեն/Վրացերեն/Ֆրանսերեն-1	2	60	30	0	30	0	30	2	2															Ստ.
6	Անգլերեն/Վրացերեն/Ֆրանսերեն-2	2	60	30	0	30	0	30			2	2													Ստ.
7	Ռուսաց լեզու-1	2	60	30	0	30	0	30			2	2													Ստ.
8	Ռուսաց լեզու-2	2	60	30	0	30	0	30					2	2											Ստ.
9	Քաղ. պաշտպան. և արտակարգ իրավիճ. բնակչ. առաջին բուժօգն.	2	60	30	15	15	0	30	2	2															Ստ.
10	Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	2	60	30	30	0	0	30							2	2									Ստ.
11	Փիլիսոփայություն	3	90	30	30	0	0	60									3	2							Ստ.
	Ֆիզդաստիարակություն	0								x		x		x		x		x		x					Ստ.

Կամընտրական դասընթացներ		4	120	60	60	0	0	60	0	0	0	0	2	2	2	2	0	0	0	0	0	0	0	Մտ.
12	Տնտեսագիտության հիմունքներ	2	60	30	30	0	0	30					2	2										Մտ.
12	Գործարարության հիմունքներ	2	60	30	30	0	0	30					2	2										Մտ.
12	Իրավունքի հիմունքներ	2	60	30	30	0	0	30					2	2										Մտ.
12	Քաղաքագիտության հիմունքներ	2	60	30	30	0	0	30					2	2										Մտ.
12	Կրոնագիտության հիմունքներ	2	60	30	30	0	0	30					2	2										Մտ.
12	Մշակութաբանության հիմունքներ	2	60	30	30	0	0	30					2	2										Մտ.
12	Հոգեբանության հիմունքներ	2	60	30	30	0	0	30					2	2										Մտ.
12	Տրամաբանության հիմունքներ	2	60	30	30	0	0	30					2	2										Մտ.
12	Բարոյագիտության հիմունքներ	2	60	30	30	0	0	30					2	2										Մտ.
12	Սոցիոլոգիայի հիմունքներ	2	60	30	30	0	0	30					2	2										Մտ.
13	Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	2	60	30	30	0	0	30							2	2								Մտ.
13	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	2	60	30	30	0	0	30							2	2								Մտ.
13	Կիրառական վիճակագրություն	2	60	30	30	0	0	30							2	2								Մտ.
13	Մաթեմատիկայի հիմունքներ	2	60	30	30	0	0	30							2	2								Մտ.
13	Հաղորդակցման հմտություններ	2	60	30	30	0	0	30							2	2								Մտ.
13	Քննական և ստեղծագործական մտածողություն	2	60	30	30	0	0	30							2	2								Մտ.
13	Մեդիագրագիտություն	2	60	30	30	0	0	30							2	2								Մտ.
13	Ռուսաց լեզու-3	2	60	30	30	0	0	30							2	2								Մտ.
13	Անգլերեն-3	2	60	30	30	0	0	30							2	2								Մտ.

	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	144	432 0	144 0	328	11 12	0	288 0	24	16	24	16	24	16	21	14	24	16	18	12	6	4	3	6	
14	Նկարչություն-1	9	270	90	8	82	0	180	9	6															Առ.ե զր.գ ն.
15	Գծագրություն և հեռանկար	9	270	90	10	80	0	180	9	6															Առ.ը նթս.
16	Պլաստիկ անատոմիա	3	90	30	14	16	0	60	3	2															Առ.ե զր.գ ն.
17	Գունատեսություն	3	90	30	4	26	0	60	3	2															Առ.ե զր.գ ն.
18	Նկարչություն-2	9	270	90	8	82	0	180			9	6													Առ.ե զր.գ ն.
19	Նյութերի տեխնոլոգիա	6	180	60	30	30	0	120			6	4													Առ.ը նթս.
20	Բիոնիկա և արխիտեկտոնիկա	6	180	60	8	52	0	120			6	4													Առ.ե զր.գ ն.
21	Կոմպոզիցիայի հիմունքներ	3	90	30	4	26	0	60			3	2													Առ.ե զր.գ ն.
22	Նկարչություն-3	9	270	90	10	80	0	180					9	6											Առ.ե զր.գ ն.
23	Արվեստի պատմություն -1	6	180	60	52	8	0	120					6	4											Առ.ը նթս.
24	Համակարգչային գրաֆիկա և եռաչափ մոդելավ. -1	6	180	60	20	40	0	120					6	4											Եզր. գն.
25	Օրնամենտալ ոճավորում	3	90	30	4	26	0	60					3	2											Առ.ե զր.գ ն.
26	Նկարչություն-4	9	270	90	10	80	0	180							9	6									Առ.ե զր.գ

																									ն.
27	«ՀԲ» Արվեստի պատմություն-2	6	180	60	52	8	0	120							6	4									Եզր. գն.
28	Համակարգչային գրաֆիկա և եռաչափ մոդելավորում -2	6	180	60	20	40	0	120							6	4									Եզր. գն.
29	Նկարչություն-5	9	270	90	8	82	0	180									9	6							Առ.ե զր.գ ն.
30	Համակարգչային գրաֆիկա և եռաչափ մոդելավ. -3	6	180	60	10	50	0	120									6	4							Եզր. գն.
31	Քանդակագործություն	9	270	90	10	80	0	180									9	6							Առ.ե զր.գ ն.
32	Դիզայնի պատմություն	3	90	30	22	8	0	60											3	2					Առ.ե զր.գ ն.
33	Նկարչություն-6	9	270	90	8	82	0	180											9	6					Առ.ե զր.գ ն.
34	Համակարգչային գրաֆիկա և եռաչափ մոդելավ. -4	6	180	60	8	52	0	120											6	4					Եզր. գն.
35	Նկարչություն-7	6	180	60	4	56	0	120													6	4			Առ.ե զր.գ ն.
36	Բրենդավորում	3	90	30	4	26	0	60															3	6	Առ.ը նթս.
	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ 1)	36	1080	360	52	308	0	720	0	0	0	0	0	0	0	0	0	0	12	8	12	8	12	24	
37/1	«ՀԲ» Դիզայն նախագծում-1	6	180	60	10	50	0	120											6	4					Եզր. գն.
38/1	Ինտերիերի և էքստերիերի դիզայն	6	180	60	10	50	0	120											6	4					Առ.ե զր.գ ն.
39/1	«ՀԲ» Դիզայն նախագծում-2	6	180	60	10	50	0	120													6	4			Եզր.

																									զն.
40/1	Մակետավորում -1	6	180	60	4	56	0	120													6	4			Առ.ե գր.գ ն.
41/1	Դիզայն նախագծում-3	6	180	60	10	50	0	120															6	12	Առ. ընթ. ստ.
42/1	Մակետավորում -2	6	180	60	8	52	0	120															6	12	Առ. ընթ. ստ.
37/2	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ 2)	36	1080	360	62	298	0	720	0	0	0	0	0	0	0	0	0	0	12	8	12	8	12	24	
	«ՀԲ» Հազուստի մոդելավորում և նախագծում-1	9	270	90	10	80	0	180										9	6						Եզր. զն.
38/2	Տարազի պատմություն	3	90	30	20	10	0	60										3	2						Առ.ե գր.գ ն.
39/2	«ՀԲ» Հազուստի մոդելավորում և նախագծում-2	6	180	60	10	50	0	120													6	4			Եզր. զն.
40/2	Աշխատանք նյութի վրա-1	6	180	60	4	56	0	120													6	4			Առ.ե գր.գ ն.
41/2	Հազուստի մոդելավորում և նախագծում-3	6	180	60	10	50	0	120															6	12	Առ. ընթ. ստ.
42/2	Աշխատանք նյութի վրա-2	6	180	60	8	52	0	120															6	12	Առ. ընթ. ստ.
	ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՍՈՂՈՒԼՆԵՐ	21	630	0	0	0	0	630	0	0	0	0	0	0	3	0	3	0	0	0	0	0	15	0	
43	Ուսումնական պրակտիկա	3	90					90							3	0									Ստ.
44	Մասնագիտական պրակտիկա-1	3	90					90									3	0							Ստ.
45	Ավարտական աշխատանք	12	360					360															12	0	Պաշտ.

46	Մասնագիտական պրակտիկա-2	3	90					90															3	0	Ստ.
	ՀԱՐԱԿԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՑ ԸՆՏՐՎՈՂ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ	12	360	120				240	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	12	8	0	0	Առ.ը նթս.
47	Հարակից դասընթաց-1- 6 կրեդիտ	6	180	60				120													6	4			
48	Հարակից դասընթաց-2- 6 կրեդիտ	6	180	60				120													6	4			
	ԸՆԴԱՄԵՆԸ								30	22	30	22	30	24	30	22	30	18	30	20	30	20	30	30	240
Կրթական մոդուլների քանակը									7		7		7		7		5		5		5		5		48

**«Դ Ի Զ Ա Յ Ն» ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ/ ՊԱՐՏԱԴԻՐ

1. 0302/Բ 01	2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6. 1-ին կիսամյակ	7. ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է ուսումնասիրել խոսքը, նրա դրսևորման ձևերը, ուղղախոսական ու արտասանական նորմերը, խոսքի բաղադրիչների կապակցման միջոցները, խոսքի մասերի գործածության յուրահատկությունները, գրագրության ձևերը և խոսքային էթիկան, կառուցել արտահայտիչ ու ներգործուն գրավոր ու բանավոր խոսք: Դասընթացի խնդիրները. - ուսուցանել խոսքի մշակույթի ընդհանուր օրինաչափությունները, լեզվական և գրական նորմերը, հնչյունական, բառային և քերականական մակարդակներն ու նրանց կիրառության յուրահատկությունները, - ձևավորել ու մշակել գրական խոսքի բարձր ճաշակ ու մշակույթ:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն - ներկայացնելու խոսքի ընդհանուր հատկանիշները, դրսևորման ձևերը, սահմանելու և ճիշտ կիրառելու լեզվական և հնչյունական-արտասանական, ուղղախոսական նորմերը, - ձևավորելու բանավոր խոսքի կուլտուրա և գրավոր խոսքի բարձր մակարդակ՝ ճիշտ և տեղին կիրառելով լեզվական տարբեր իրողությունները (բառապաշարի շերտեր, ձևաիմաստային խմբեր, դարձվածքներ և այլն): - սահմանելու, բացատրելու գրական, լեզվական, ոճական նորմաները, որոնք կիրառելի են ժամանակակից հայերենում: բ. գործնական մասնագիտական կարողություններ - կառուցելու հարուստ բառապաշարով, շարահյուսորեն ճշգրիտ կապակցված գրավոր և բանավոր խոսք, - գործառնելու գրագրության ձևերը, ուղղախոսության և արտասանվածքի նորմերը բանավոր խոսքում: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ - պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, - աշխատելու թիմում:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. - քննարկում /բանավեճ - համագործակցային աշխատանք - մտազրոհ - վերլուծական մեթոդ - խոսքային կամ բանավոր մեթոդ - գրավոր մեթոդ - բացատրական մեթոդ:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է հանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը: Որից հետո անց է կացվում բանավոր հարցում նախապես տրված հարցաշարի շրջանակներում:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Խոսքի մշակույթ առարկան, նպատակը և խնդիրները: Խոսքի դրսևորման ձևերը: Լեզվական նորմ:		

Թեմա 2. Հնչյունական /արտասանական/ մակարդակ: Գրագրության ձևեր: Թեմա 3. Բառային մակարդակ: Թեմա 4. Քերականական մակարդակ: Ձևաբանություն: Թեմա 5. Շարահյուսություն: 14. Հիմնական գրականության ցանկ. 1. Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, Եր., 2014: 2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ, (Հեղինակային խումբ), Գիրք Բ, Եր, 2015: 3. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/, Եր, 2002: 4. Բաղդիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Եր., 2003: 5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր, 2003: 6. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Եր., 1997:

1.0001/Բ 02	2. Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	3.2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 10/20/0	
6. 1-ին կիսամյակ	7. ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է՝ սովորողների մոտ ձևավորել ԱԻ-ների մասին պատկերացում, ԱԻ-ներում գործելու հմտություններ, փրկարարական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ հմտություններ և տարաբնույթ պատահարների ժամանակ հնարավոր վնասվածքների և այլ ախտահարումների դեպքում առաջին բուժօգնության ցուցաբերման անհրաժեշտ կարողություններ:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու տարաբնույթ ԱԻ-ների հետևանքով ստեղծված իրավիճակները և դրան դիմակայելու ուղիները, 2. ներկայացնելու տեղեկատվություն ԱԻ-ում և պատերազմի ժամանակ պետության կողմից բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների մասին, 3. մեկնաբանելու ՀՀ-ում հավանական ԱԻ-ներից բխող ռիսկերի գնահատման մեթոդները, 4. ներկայացնելու համաճարակային իրավիճակներում վարակի տարածման հնարավոր ուղիներն ու բացատրելու դրանցից պաշտպանության ձևերը, 5. ներկայացնելու առաջին բուժօգնություն ցուցաբերելու հիմնահարցերը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. գնահատելու տուժածի վիճակը (առաջնային և երկրորդային զննում), վնասվածքի տեսակն ու ծանրությունը և ցույց տալ առաջին բուժօգնություն, 2. դրսևորելու նախընտրելի վարքագիծ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում, 3. ցուցաբերելու առաջին բուժօգնություն տարաբնույթ վնասվածքների և ախտահարումների դեպքերում, 4. օգտագործելու ձեռք բերված կարողությունները ԱԻ և պատերազմի ժամանակ պետության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքում: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. կիրառելու ձեռք բերված տեսական գիտելիքները գործնականում, 2. աշխատելու թիմում և լուծելու բարդ խնդիրներ, 3. վերլուծելու իրավիճակը և կատարելու անհրաժեշտ գործողություններ իր և շրջապատի համար:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքը. Գ7. Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. սեմինար 3. հարցադրումներ և քննարկումներ 4. լաբորատոր աշխատանքներ 5. տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշները Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված: Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար		

թույլտվություն է հաճանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Արտակարգ իրավիճակներ ու պատահարներ: Թեմա 1. Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: Թեմա 2. Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: Բաժին 2. Քաղաքացիական պաշտպանություն: Թեմա 3. Բնակչության գործողությունները ահաբեկությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: Թեմա 4. Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: Թեմա 5. Բնակչության պաշտպանության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: Թեմա 6. Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: Թեմա 7. Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը: Բաժին 3. ԱՄ-ում բնակչության առաջին բուժօգնություն: Թեմա 8. Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: Թեմա 9. Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: Թեմա 10. Սուր հիվանդություններ և թունավորումներ: Թեմա 11. Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: Թեմա 12. Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Մարկարյան Ռ., Ջանջուղազյան Ն., Օհանջանյան Մ., Հարությունյան Ա., Հարությունյան Վ., Բաղդասարյան Լ., Հասրաթյան Ռ., Վարդանյան Ջ., «Քաղպաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր», Եր., 2006: 2. «Մինչբժշկական օգնությունը բնակչությանը արտակարգ իրավիճակներում», ուսումնական ձեռնարկ, Եր., 2000: 3. Մանասյան Կ., «Սիրտ-թոքային վերակենդանացման մինչբժշկական մեթոդների ուսուցումը» (ուսումնամեթոդական աշխատանք), Եր., 2007: 4. Աղամյան Մ., «Փոխադրական անշարժացում», ուսումնամեթոդական աշխատանք, Եր., 2011: 5. Մանուկյան Ս., Ճաղարյան Գ., «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր», ուսումնական ձեռնարկ, Եր., 2017:		

1.0302/ Բ 02	2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ -2	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6.2-րդ կիսամյակ	7. ստուգաք	
8. Դասընթացի նպատակն է՝ հարստացնել ու զարգացնել լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցների յուրացմամբ, գործառական բոլոր ոճերի առանձնահատկությունների իմացությամբ ու անսխալ, գրագետ գործառմամբ, ձևավորել կարողություններ՝ գեղարվեստական խոսքի հնչյունական, բառային ու քերականական առանձնահատկությունները ինքնուրույն մեկնաբանելու և արժևորելու համար, ծանոթացնել հրապարակային խոսքի ընդհանուր կառուցվածքին և հիմնական հատկանիշներին և կիրառելի դարձնել ուսումնական գործընթացներում: Դասընթացի խնդիրները. 1. բացահայտել արտահայտչական և պատկերավորման միջոցների դերը խոսքում, խոսքի գործառական տարբերակների համակարգը /գիտական, պաշտոնական, խոսակցական/, գեղարվեստական և հրապարակային խոսքի խնդիրները, կառուցվածքը, լեզվական առանձնահատկությունները:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու խոսքի արժանիքները, 2. կիրառելու արտահայտչական և պատկերավորման միջոցները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. լուսաբանելու գործառական ոճերի դասակարգման հիմունքները և ոճերի առանձնահատկությունները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. կառուցելու պատկերավոր և գրագետ խոսքարվեստ, վերացնելու խոսքային անճշտությունները, դրսևորելու խոսքային բարձր էթիկետ:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցված բանավոր ու		

գրավոր խոսք մասնագիտական հանրություն: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. քննարկում /բանավեճ 2. համագործակցային աշխատանք 3. մտազրոհ 4. վերլուծական մեթոդ 5. խոսքային կամ բանավոր մեթոդ 6. գրավոր մեթոդ 7. բացատրական մեթոդ:		
12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է հանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը: Որից հետո անց է կացվում բանավոր հարցում նախապես տրված հարցաշարի շրջանակներում:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Խոսքի արժանիքները: Թեմա 2. Խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցներ: Թեմա 3. Խոսքի գործառական տարբերակներ /գիտական, պաշտոնական, խոսակցական/: Թեմա 4. Գեղարվեստական ոճ: Հրապարակային խոսք:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, Եր., 2014: 2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, Եր., 2015: 3. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/, Եր., 2002: 4. Բաղդկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Եր., 2003: 5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2003: 6. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Եր., 1997:		
1. 0305/Բ001	2.Ռուսաց լեզու-1	3. 2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5. 0/30/0	
6. 2-րդ կիսամյակ	7. ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել բանավոր և գրավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակություններ, ելնելով հաղորդակցման հիմնական պահանջմունքներից: Դասընթացի խնդիրներն են. 1. ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա, 2. վեր հանել թերություններն ու շտկել դրանք, 3. խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները, 4. հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու ծրագրով նախատեսված քերականական նյութը, 2. ներկայացնելու ծրագրով նախատեսված անհրաժեշտ բառապաշար, 3. կիրառելու ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. կարդալու, պատմելու, մեկնաբանելու և վերարտադրելու գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստեր գրքերից, թերթերից, ամսագրերից: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. շարադրելու տեքստ (20 նախադասություն) առաջարկված որևէ թեմայով (իր, ընտանիքի, ուսման, ազատ ժամանակի, հայրենիքի, հայրենի քաղաքի, եղանակի, հետաքրքրությունների և այլնի մասին), 2. ընկալելու և սկսելու, շարունակելու և ավարտելու երկխոսությունները:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. քննարկում /բանավեճ 2. համագործակցային աշխատանք 3. էվրիստիկական մեթոդ 4. մտազրոհ 5. ինդուկտիվ մեթոդ 6. դեդուկտիվ մեթոդ 7. վերլուծական մեթոդ 8. խոսքային կամ բանավոր մեթոդ 9. գրավոր մեթոդ 10. բացատրական մեթոդ:
11. Գնահատման մեթոդները և չափանիշներն են Ստուգաբքը անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա: Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգաբքի համար թույլտվություն է հահանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը:
13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Հնչյունաբանություն: Ձայնավորների և բաղաձայնների դասակարգումը: Արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: Բաժին 2. Բառագիտություն. բառիմաստ, մենիմաստ և բազմիմաստ բառեր: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստները: Հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ: Դարձվածքներ: Բաժին 3. Բառակազմություն, բառի ձևաբանական կազմը /արմատներ, ածանցներ, վերջավորություններ, նրանց ուղղագրությունը/: Բաժին 4. Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները /բառ, ձևույթ/: Խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Գոյական անուն, քերականական կարգերը, գոյականի ուղղագրությունը: Ածական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Թվական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Դերանուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Բայ, քերականական կարգերը, ուղղագրությունը:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Русский язык, Под общ. ред. Л. М. Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004 2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация Речь., П. Б. Балаян, Л. А. Тер-Саркисян, Б. С. Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г. 3. Учебные пособия по специальности.

1. 0305/Բ002	2. Ռուսաց լեզու -2	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6. 3-րդ կիսամյակ	7. ստուգաբք	
8. Դասընթացի նպատակն է՝ ապահովել և կատարելագործել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը: Դասընթացի խնդիրներն են. 1. ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա, 2. վեր հանել թերություններն ու շտկել դրանք, 3. խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները, 4. հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. գործածելու տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, 2. կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով, 3. գործածելու մասնագիտական տեքստին հատուկ շարահյուսական կառուցվածքները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. ընտրելու, վերլուծելու և աղապատացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու		

նպատակով, - կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները, - վերարտադրելու մասնագիտական տեքստը, նաև ներկայացնելու նրա բովանդակությունը սեղմ և ընդարձակ, - թարգմանելու մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն և հակառակը, - զանազանելու մասնագիտական հատուկ շարահյուսական կառուցվածքները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ - գնահատելու, վերլուծելու և գուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը, - օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրությունները. Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. - քննարկում /բանավեճ - համագործակցային աշխատանք - էվրիստիկական մեթոդ - մտազրոհ - ինդուկտիվ մեթոդ - դեդուկտիվ մեթոդ - վերլուծական մեթոդ - խոսքային կամ բանավոր մեթոդ - գրավոր մեթոդ - բացատրական մեթոդ:		
11. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է հահանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը, որից հետո անց է կացվում բանավոր ստուգարքը:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Ձևաբանություն: Դերբայ, դերբայական դարձված, ուղղագրությունը: Մակբայ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Կապեր, շաղկապներ, մասնիկներ, ձայնարկություններ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Բաժին 2. Շարահյուսություն. շարահյուսության հիմնական միավորները /բառակապակցություն, նախադասություն, նախադասության անդամներ/: Պարզ նախադասություն, դասակարգումը, նախադասության գլխավոր և երկրորդական անդամները: Բարդ նախադասություն, դասակարգումը, տեսակները: Բաժին 3. Մասնագիտական տեքստ, կառուցվածքը, տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները: Բաժին 4. Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրները: Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքները:		
14. Հիմնական գրականության ցանկ - Русский язык, Под общ. ред. Л. М. Мкртчяна, Ер., изд-во ЕГУ, 2004. - Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация. Речь. П.Б.Балаян, Л.А.Тер-Саркисян, Б.С.Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г. - Учебные пособия по специальности.		

1. 0304/Բ01	2. Հայոց պատմություն -1	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 15/0/15	
6. 3-րդ կիսամյակ	7. Մտուգարք	
8. Դասընթացի նպատակն է ուսումնասիրել հայ ժողովրդի ծագումից մինչև 17-րդ դարն ընկած ժամանակահատվածի պատմությունը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք Հայկական լեռնաշխարհի պատմական աշխարհագրության, համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտական բարձր մակարդակով:		

Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն ՀՀ քաղաքական լավագույն ապագայի կերտման նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն: Դասընթացի խնդիրները. ✓ Ձևավորել հստակ պատկերացում հայոց հին և միջնադարյան պետականությունների առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին: ✓ Ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կոորդինություն: ✓ Ապահովել գիտելիքներն հիմք հետագա դասընթացների հետ տրամաբանական կամ պատճառահետևանքային կապ ապահովելու համար:
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն. - վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը: - նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները: - ներկայացնելու համապատասխան ժամանակաշրջանում ստեղծված հոգևոր և նյութական մշակույթի արժեքները, լուսաբանելու Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսության, ռազմական և այլ բնագավառներ ու նվաճումները: բ. գործնական մասնագիտական կարողություններ. - բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը, - արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում, - արժևորելու ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական դարաշրջաններում ստեղծված մեր մշակութային արժեքները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ - տարբերակելու և գնահատելու մեր պատմության բնորոշ առանձնահատկությունները, ինչը և հնարավորություն կտա քաղաքական կողմնորոշում ունենալու ներկայում և ապագայում, բանավիճելու:
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ: Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. - դասախոսություն - ռեֆերատ - անհատական և խմբային առաջադրանքներ:
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգաքննի համար թույլտվություն է հանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը, որից հետո անց է կացվում բանավոր հարցում:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.
Թեմա 1. Հայաստանը հնագույն շրջանում: Թեմա 2. Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի թագավորությունը /Ք.ա. 9-6-րդ դդ/: Երվանդունիների թագավորությունը: Թեմա 3. Մեծ Հայքի թագավորության վերելքը Արտաշեսյան շրջանում: Թեմա 4. Արշակունիների թագավորությունը: Թեմա 5. Հայաստանը վաղ միջնադարում: Թեմա 6. Հայաստանը զարգացած միջնադարում: Թեմա 7. Հայաստանը ուշ միջնադարում:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Հայոց պատմություն, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Եր., 2012:
2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Եր., 1975:
3. Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Եր., 2000:
4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.), Եր., 2009:

1.0105/ Բ 01	2.Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.30/0/0	
6.4-րդ կիսամյակ	7.ստուգարք	
8.Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել կենսոլորտի կառուցվածքի տեսական հիմնահարցերը և «մարդ-կենսոլորտ» համակարգում նրանց փոխազդեցությունը, ինչպես նաև պատրաստել որակյալ մասնագետներ, որոնք կարող են գնահատել շրջակա միջավայրի աղտոտման աստիճանը, որպես հասարակության գործունեության արդյունք և նախագծուշացնելու կամ կանխարգելելու անթրոպոգեն գործունեության ոչ ցանկալի հետևանքները: Նպաստել հասկանալու էկոլոգիական հիմնախնդիրների էությունը և զարգացնել այդ խնդիրները լուծելու ունակությունը: Դասընթացի խնդիրները. 1. ուսանողների տալ հիմնարար գիտելիքներ՝ էկոլոգիայի հիմնական հասկացությունների և օրենքների, էկոլոգիական համակարգերի և գործընթացների, շրջակա միջավայրի էկոլոգիական հնարավորությունների, բնական և տեխնոգեն միջավայրերի, ժամանակակից զարգացման տենդենցների, էկոլոգիական մշակույթի, որպես գործոնի ձևավորման, էկոլոգիական ճգնաժամերի, էկոլոգիայի բնագավառում միջազգային իրավական նորմերի, Հայաստանի Հանրապետությունում գործող էկոլոգիական օրենսդրության մասին, ուսանողների մոտ զարգացնել հմտություններ բնագիտությունից, էկոլոգիայից, բնապահպանությունից՝ ձևավորելով դիտարկելու, ստեղծագործելու, հետազոտելու ունակությունները, տրամաբանական և գիտական լեզվամտածողությունները, եզրակացություն անելու կարողությունները: 2. դաստիարակել քաղաքացիական դիրքորոշում և պատասխանատվություն՝ մարդկության և բնական միջավայրի նկատմամբ:		
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. սահմանելու էկոլոգիայի հիմնական հասկացությունները, էկոլոգիական հիմնական և կարևոր օրենքները, սկզբունքները, օրինաչափությունները և կանոնները, 2. նշելու շրջակա միջավայրի զարգացման կոնցեպցիաները և թվարկելու մթնոլորտի, ջրոլորտի և հողոլորտի վրա հիմնական անթրոպոգեն ազդեցություն ունեցող աղտոտող նյութերը և ներկայացնելու նրանց վերլուծության մեթոդները: 3. բացատրելու, թե ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ բնակչության վրա շրջակա միջավայրի աղտոտման հետևանքները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. էկոլոգիական գնահատական տալու շրջակա միջավայրի հիմնական գործոններին, 2. նախագծուշական միջոցառումներ ներկայացնելու՝ գերծ պահելու շրջակա միջավայրը էկոլոգիական աղետներից, 3. անցկացնելու մոնիտորինգ և գնահատելու տարածաշրջանի էկոլոգիական իրավիճակը, համապատասխան եզրակացություն տալ այն նպաստող գործոնների մասին, որոնք կբարելավեն տարածաշրջանի էկոլոգիան: գ. քնդիմանքական/փոխանցելի կարողություններ 1. ցուցաբերելու ինքնուրույն ուսումնասիրելու ունակություն: 2. հետազոտություններ անելու՝ ստացած տեղեկությունը արհեստավարժ օգտագործելու խնդիրների լուծման նպատակով: 3. կիրառելու կանխատեսման մեթոդը՝ որոշելու համար, թե այս կամ այն գործոնը, ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ տվյալ էկոհամակարգի վրա:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.		

1. Պասիվ դասախոսություն 2. Ակտիվ դասախոսություն ✓ <i>հարց ու պատասխան</i> ✓ <i>զրույց</i> 3.Ինտերակտիվ դասախոսություն ✓ <i>«Power Point» համակարգչային ծրագրով դրվագների ցուցադրում</i> ✓ <i>հարց ու պատասխան</i> ✓ <i>բանավեճ</i> ✓ <i>զրույց</i>		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. 1. Բանավոր քննում ըստ նախապես ներկայացված հարցաշարի կամ դասախոսի կողմից առաջադրված թեմայով ռեֆերատի գեկուցում: 2. Այն ուսանողները, որոնք ամբողջական դասընթացի մաս կազմող 5 և ավելի թեմաներից կամ ինքնուրույն աշխատանքների թեմաներից գնահատվել են «ստուգված», ապա ստանում են «Ստուգված»: 13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Էկոլոգիայի համառոտ պատմությունը: Էկոլոգիայի կառուցվածքը, առարկան և օբյեկտը: Լիբիխի, մինիմումի, Վիլյամի գործոնների անկախության և Շելֆորդի տոլերանտության օրենքները: Թեմա 2. Էկոհամակարգի գործունեության սկզբունքները: Էկոհամակարգի կառուցվածքը: Պրոդուցենտներ, կոնսումենտներ, ռեդուցենտներ /ավտոտրոֆներ, հետերոտրոֆներ/: Թեմա 3. Օրգանիզմների գոյության միջավայրը և պայմանները: Կենսական, ոչ կենսական, մարդածին, սահմանափակող գործոններ: Օրգանիզմների հարմարվելը միջավայրի պայմաններին: Թեմա 4. Էներգիայի և նյութերի հոսքը Էկոհամակարգում: Էկոհամակարգերի էներգետիկական դասակարգումը: Էներգիայի և նյութերի փոխանցումը Էկոհամակարգերում, Էներգիայի կորուստները սննդային շղթաներում: Ազոտի, ֆոսֆորի, ծծմբի, ածխածնի շրջանառությունը: Թեմա 5. Մարդու առողջության Էկոլոգիական ասպեկտները: Միջավայրի քիմիական, կենսաբանական աղտոտումը, միջավայրի աղտոտումը աղմուկով, սննդամթերքների աղտոտումը: Գյուղատնտեսական և ուրբանիստական համակարգեր: Թեմա 6. Անսպառ և սպառվող պաշարները: Մարդու ազդեցությունը կենսոլորտի վրա: Արդյունաբերության առաջընթացը և բնապահպանության հիմնախնդիրները: Արդյունաբերության Էկոլոգիացման սկզբունքները: Թեմա 7. Քարոլորտի կառուցվածքը: Մթնոլորտի կառուցվածքը, նշանակությունը: Ջուրը երկրի վրա և նրա հատկությունները: Կենսոլորտի կառուցվածքը: Հողը, նրա կառուցվածքը և նշանակությունը բնության մեջ: Թեմա 8. Պոպուլյացիայի բնութագիրը, ծնելիություն և մահացություն, պոպուլյացիայի սեռային կազմը, պոպուլյացիաների միջև գոյություն ունեցող փոխազդեցության ձևերը, գիշատիչ-զոի փոխհարաբերությունը: Թեմա 9. Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրները և դրա Էկոլոգիական հետևանքները: Ջրոլորտի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Քարոլորտի և բնահողի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Երկրի կլիմայի փոփոխության և անապատացման հիմնախնդիրները:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Գրիգորյան Կ., Եսայան Ա., Ժամհարյան Հ., Խոյեցյան Ա., Մովսեսյան Հ., Փիրումյան Գ., Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, Եր., 2010: 2. Գրիգորյան Ա., Աղայան Ա., ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի ներկա վիճակը, Եր., 2008: 3. Մելքումյան Լ., Գալստյան Մ., Բնապահպանության հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ, Եր., 2010: 4. Շահինյան Մ., Թամրազյան Ն., Էկոլոգիա, Եր., 2002: 5. Валова В.Д., Основы экологии: Учебное пособие.-5-е изд., Москва, 2005.		

1. 0304/Բ 02	2. Հայոց պատմություն-2	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 15/0/15	
6. 4-րդ կիսամյակ	7. Ստուգաթղթ	

8. Դասընթացի նպատակն է ուսումնասիրել հայ ժողովրդի 17-րդ դարից մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածի պատմությունը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտության ամենավերջին ձեռքբերումների մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն մեր ապագայի կառուցման գործածելու նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն: Հայոց պատմությունը դիտարկվում է համաշխարհային պատմության համատեքստում: Դասընթացի խնդիրները՝ ✓ Ձևավորել հստակ պատկերացում հայոց նոր և նորագույն պատմության առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին: ✓ Ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն: ✓ Ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների ուսումնասիրման, քննարկման և ներկայացման համար:
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն. 1. վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը, 2. նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ. 1. բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը, 2. արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ. 1. տարբերակելու և գնահատելու մեր պատմության որոշակի օրինաչափությունները, ինչը ևս ինարավորություն կտա ապագայում ճիշտ կողմնորոշվելու:
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույթները. Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ: Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությում: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն, 2. ռեֆերատ, 3. անհատական և խմբային առաջադրանքներ:
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է հաճախորդիսանում նախնական համակարգչային թեստավորումը, որից հետո անց է կացվում բանավոր հարցում:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Հայ ազատագրական շարժումները 16-18-րդ դարերում: Թեմա 2. Ռուսաստանի ներթափանցումը Անդրկովկաս 19-րդ դարի սկզբին: Թեմա 3. Հայկական հարցի միջազգայնացումը: Թեմա 4. Ազատագրական խմբակների, կազմակերպությունների ու քաղաքական-ազգային կուսակցությունների ձևավորումը: Թեմա 5. Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: Թեմա 6. Իրավիճակը Հայաստանը 20-րդ դարի սկզբին: Արևմտահայության Մեծ Եղեռնը և ինքնապաշտպանական մարտերը: Թեմա 7. Հայաստանը 1917թ. ռուսական հեղափոխությունների շրջանում: Թեմա 8. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.: Թեմա 9. Խորհրդային Հայաստանը 1920-1991թթ.: Թեմա 10. Հայաստանի Երրորդ Հանրապետությունը: Թեմա 11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:	
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Հայոց պատմություն, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Եր., 2012: 2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Եր., 1975: 3. Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Եր., 2000: 4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.), Եր., 2009:	

1. 0304/Բ 07	2. Փիլիսոփայություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 5-րդ կիսամյակ	7. ստուգաք	
8. Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված և լավ մասնագետի համար: Դասընթացի խնդիրները. 1. բացահայտել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, 2. բացատրել կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, 3. հիմնարար գիտությունների տվյալների փիլիսոփայական մեկնաբանությունների միջոցով աջակցել ուսանողի համակարգված աշխարհայացքի, քաղաքակրթական զարգացումների, արդի միտումներին և այդ համատեքստում ազգային մրցունակ համակարգի մասին պատկերացումների ձևավորմանը:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. սահմանելու կեցության համընդհանուր օրենքները, կատեգորիաները, հիմնական ձևերն ու առանձնահատկությունները, 2. բացահայտելու ճանաչողության, գիտության էության առանձնահատկությունները, 3. ներկայացնելու աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի փիլիսոփայական հայեցակարգի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները, ճշմարտության և մոլորության, գիտելիքների և հավատի, ռացիոնալ և իռացիոնալ սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. տարբերելու գիտականը ոչ գիտականից, ճշմարիտը կեղծից, էականը ոչ էականից, 2. վերլուծելու հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացները և դրանց պատճառահետևանքային կապերը, 3. կողմնորոշվելու մարդ-մարդ և մարդ-բնություն փոխհարաբերություններում: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. տեղին և ժամանակին գործածելու փիլիսոփայական մտածողության կոնցեպտուալ ապարատը:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ: Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ		

նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. սեմինար 3. քննարկում 4. զեկուցում 5. ռեֆերատ:
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարք
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Փիլիսոփայության առարկան: Թեմա 2. Կեցություն և մատերիա: Թեմա 3. Դիալեկտիկա: Թեմա 4. Բնություն: Թեմա 5. Մարդ և պրակտիկա: Թեմա 6. Գիտակցություն և ճանաչողություն: Թեմա 7. Գիտություն: Թեմա 8. Հասարակություն:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Դավիթ Անհաղթ, Երկեր, Եր., 1980: 2. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 1, Եր., 1987: 1. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 2, Եր., 1987: 2. Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայության պատմություն, Եր., 1980: 3. Կյուրեղյան Է., Փիլիսոփայություն, Եր., 2004: 4. Փիլիսոփայության բառարան, Եր., 1975:

1. 0305/Բ 004	2. Անգլերեն -1	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6. 1-ին կիսամյակ	7. ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է՝ ձևավորել ուսանողների լեզվական գիտելիքները անգլերեն լեզվի բոլոր մակարդակներում (կարդալ, գրել, ունկնդրել, խոսել), զարգացնել ուսանողների հաղորդակցական հմտությունները՝ միջմշակութային հաղորդակցման:		
Դասընթացի խնդիրները. 1. ներկայացնել տվյալ մասնագիտության ոլորտում խիստ գործածական բառապաշար, 2. զարգացնել ձեռք բերված գիտելիքները համապատասխան խոսքային իրավիճակներում:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. անգիր վերարտադրելու մասնագիտական բառապաշարը, 2. թվարկելու հնչյունական և ուղղախոսական կանոնները և բացառությունները, 3. թվարկելու նախադասության տիպերը և դրանց շարադասական հատկանիշները, 4. տարբերելու խոսքի մասերը և դրանց կիրառական առանձնահատկությունները:		
բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. կիրառելու մասնագիտական բառապաշարը և քերականական գիտելիքները՝ ճիշտ բանավոր և գրավոր խոսք կառուցելիս, 2. ընկալելու կարդացած և ունկնդրած նյութի հիմնական բովանդակությունը, 3. կատարելու A1 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն:		
գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. տարանջատելու հիմնական տեղեկատվությունը երկրորդականից, 2. իրականացնելու համատեղ աշխատանք թիմում, 3. կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ:		
Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. հաղորդակցական մեթոդ		

2. մտազրոհ 3. ուսանողական պորտֆոլիո 4. խմբային աշխատանք 5. գրավոր և բանավոր թարգմանություն 6. աշխատանք տեղեկագրով 7. ռեֆերատ 8. ինքնուրույն աշխատանք:
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է հանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը: Որն անցնելուց հետո ստուգարքը համարվում է ստացած ուսանողի՝ մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ /և վերջում ներկայացրած աշխատանքների առկայության դեպքում. • գրավոր և բանավոր թարգմանություններ, • ռեֆերատ, • լուսատեսաշար • խմբային աշխատանք, • ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ):
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Հնչյունաբանություն և ուղղախոսություն: Հնչյունների դասակարգումը և արտասանական հատկանիշները: Բաժին 2. Քերականություն: Խոսքի մասեր: Շարահյուսություն: Բաժին 3. Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Համաշխարհային պատմության հիմնահարցեր: Թարգմանություններ անգլերենից հայերեն:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Mkhitarian, Ye., Basic English for University Students, YSU Press, Yerevan, 2004. 2. Cincotta, Howard (Ed.). An Outline of American History. United States Information Agency., 1994. 3. Kirn, Elaine. About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division., 1989. 4. Myers, Sondra (Ed.). Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College. 1997. 5. Short, Deborah J., Seufert-Bosco, Margaret, & Grognet, Allene Guss. (1995). By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc.

1.0305/F009	2.Ֆրանսերեն – 1	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.0/30/0	
6. 1-ին կիսամյակ	7. ստուգարք	
8.Դասընթացի նպատակն է՝ հարստացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականական և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա: Այս փուլում ստացած գիտելիքները հիմք են հանդիսանում հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար:		
Դասընթացի խնդիրները. 1. խորացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականության և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա, 2. ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ, 3. հանրագումարի բերել ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:		
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները, 2. ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը: բ. գործնական մասնագիտական կարողություններ		

1. ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները, 2. ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները, 3. լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անձանոթ բառ), 4. առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն, 2. ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները, 3. ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր, 4. բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր: 10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: 11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝ 1. անհատական և խմբային առաջադրանքներ 2. ընթերցանություն 3. թեստ 4. ռեֆերատ 5. դիագնոստիկ ստուգում 6. շնորհանդես 7. ինքնուրույն աշխատանք: 12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարք Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է հանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը: Որից հետո անց է կացվում բանավոր հարցում նախապես տրված հարցաշարի շրջանակներում: 13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchainement. Liaison. Թեմա 2. Հատուկ և հասարակ գոյական: Գոյականի սեռը, թիվը: Մեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: Թեմա 3. Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: Թեմա 4. Ածական: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: Ածականի իմաստի փոփոխությունը՝ կախված նրա դիրքից: Թեմա 5. Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: Թեմա 6. Թվական: Քանակական և դասական թվականներ և դրանց գործածությունը: Թեմա 7. Դերանուն: Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ: 14. Հիմնական գրականության ցանկ. 1. Попова И.Н., Казакова Ж.А., «Французский язык», Москва, 2008 2. M. Gregoire, Od. Thievenaz, «Grammaire progressive du francais» (Niveau intermediaire). 3. Cl. Miquel, «Communication progressive du francais» (Niveau debutant), 4. M. Djoulhakian, R. Meliksntian, A. Mouradian, «Manuel de francais», Erevan – 2011.		
--	--	--

1. 0305/Բ 007	2. Վրացերեն -1	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6. 1-ին կիսամյակ	7. ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել բանավոր և գրավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակություններ, ելնելով հաղորդակցման հիմնական պահանջմունքներից: Դասընթացի խնդիրներն են. 1. ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա, 2. վեր հանել թերություններն ու շտկել դրանք, 3. խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները, 4. հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների		

շրջանակներում:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն - ներկայացնելու ծրագրով նախատեսված քերականական նյութը, - ներկայացնելու ծրագրով նախատեսված անհրաժեշտ բառապաշար, - կիրառելու ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: բ. գործնական մասնագիտական կարողություններ - կարդալու, պատմելու, մեկնաբանելու և վերարտադրելու գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստեր գրքերից, թերթերից, ամսագրերից: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ - շարադրելու տեքստ (20 նախադասություն) առաջարկված որևէ թեմայով (իր, ընտանիքի, ուսման, ազատ ժամանակի, հայրենիքի, հայրենի քաղաքի, եղանակի, հետաքրքրությունների և այլնի մասին), - ընկալելու և սկսելու, շարունակելու և ավարտելու երկխոսությունները:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. - քննարկում /բանավեճ - համագործակցային աշխատանք - էվրիստիկական մեթոդ - մտազրոհ - ինդուկտիվ մեթոդ - դեդուկտիվ մեթոդ - վերլուծական մեթոդ - խոսքային կամ բանավոր մեթոդ - գրավոր մեթոդ - բացատրական մեթոդ:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են Ստուգաթիվ անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Հնչյունաբանություն: Ձայնավորների և բաղաձայնների դասակարգումը: Արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: Բաժին 2. Բառագիտություն. բառիմաստ, մեկիմաստ և բազմիմաստ բառեր: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստները: Հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ: Դարձվածքներ: Բաժին 3. Բառակազմություն, բառի ձևաբանական կազմը /արմատներ, ածանցներ, վերջավորություններ, նրանց ուղղագրությունը/: Բաժին 4. Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները /բառ, ձևույթ/: Խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Գոյական անուն, քերականական կարգերը, գոյականի ուղղագրությունը: Ածական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Թվական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Դերանուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Բայ, քերականական կարգերը, ուղղագրությունը:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Գորգաձև Ռ., Հայերեն-վրացերեն գրուցարան, Երևան-Թբիլիսի, 2004:		

1. 0305/Բ 005	2. Անգլերեն- 2	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6. 2-րդ կիսամյակ	7. ստուգաթիվ	
8. Դասընթացի նպատակն է՝ հարստացնել մասնագիտական բառապաշարը, խորացնել ուսանողների գիտելիքները և հմտությունները հաղորդակցական բարդ իրավիճակներում: Դասընթացի խնդիրները. - ներկայացնել պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և նմուշների հիման վրա ձևակերպել սեփականը, - հաղորդել գիտելիքներ մասնագիտական նորաբանությունների ոլորտից:		

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. թվարկելու պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և ներկայացնելու սեփական օրինակները, 2. կազմելու գրավոր և բանավոր շարադրանք՝ օգտագործելով A2 մակարդակին համապատասխան բառապաշար և քերականական կառույցներ: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. ընկալելու և վերարտադրելու կարդացած և ունկնդրած A2 մակարդակի տեքստերի և երկխոսությունների հիմնական բովանդակությունը, 2. շարադրելու խոսքային իրավիճակին համապատասխան գրավոր և բանավոր պատասխան, 3. կատարելու A2 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. իրականացնելու համատեղ աշխատանք թիմում, 2. կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ, 3. ներգրավելու ձեռք բերված գիտելիքները և կարողությունները միջազգային ասպարեզում՝ անգլերենը օգտագործելով որպես հետագա մասնագիտական առաջընթացի միջոց:	10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.. Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. հաղորդակցական մեթոդ 2. մտազրոհ 3. ուսանողական պորտֆոլիո 4. խմբային աշխատանք 5. գրավոր և բանավոր թարգմանություն 6. աշխատանք տեղեկագրով 7. ռեֆերատ 8. ինքնուրույն աշխատանք:	12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է հանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը: Որն անցնելուց հետո ստուգարքը համարվում է ստացած ուսանողի՝ մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ /և/ վերջում ներկայացրած աշխատանքների առկայության դեպքում. • գրավոր և բանավոր թարգմանություններ, • ռեֆերատ, • լուսատեսաշար • խմբային աշխատանք, • ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ):
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Պաշտոնական գրագրություն: Ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ, դիմում: Բաժին 2. Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Հայոց պատմությունը համաշխարհային համատեքստում: Թարգմանություններ հայերենից անգլերեն:	14. Հիմնական գրականության ցանկ. 1. Mkhitarian, Ye., Basic English for University Students, YSU Press, Yerevan, 2004, 2. Cincotta, Howard (Ed.). An Outline of American History. United States Information Agency, 1994. 3. Kirn, Elaine. About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division, 1989. 4. Myers, Sondra (Ed.). Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College. 1997. 5. Short, Deborah J., Seufert-Bosco, Margaret, & Grognet, Allene Guss. (1995). By the People, for the People: U.S.

1.0305/Բ 010	2.Ֆրանսերեն – 2	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.0/30/0	
6.2-րդ կիսամյակ	7.ստուգարք	
8.Դասընթացի նպատակն է՝ խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր մասնագիտական տեքստերից օգտվելու ունակություններ: Դասընթացի խնդիրները. 1. խորացնել նախորդ կիսամյակում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականության և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա, 2. ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ, 3. հանրագումարի բերել ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները: 9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները, 2. ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները, 2. ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները, 3. լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անձանոթ բառ), 4. առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն, 2. ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները, 3. ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր, 4. բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր: 10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: 11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝ 1. անհատական և խմբային առաջադրանքներ 2. ընթերցանություն 3. թեստ 4. ռեֆերատ 5. դիագնոստիկ ստուգում 6. շնորհանդես 7. ինքնուրույն աշխատանք: 12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարք Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է հանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը: Որից հետո անց է կացվում բանավոր հարցում նախապես տրված հարցաշարի շրջանակներում: 13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.		

Թեմա 1. Գոյականների իգական սեռի կազմության տարբեր միջոցների դասակարգում՝ քերականորեն, ձևաբանորեն, բառային: Երկու սեռ ունեցող գոյականներ: Թեմա 2. Միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ. Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը: Թեմա 3. Անորոշ դերանվանական ածականներ: Թեմա 4. Հարաբերական դերանուններ. դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ Թեմա 5. Բայ: Եղանակավորման քերականական արտահայտությունը: Թեմա 6. Ֆրանսերեն լեզվի խոնարհման բնութագիրը: Եղանակների կազմությունը և գործածությունը նախադասություններում: Թեմա 7. Նախդիրների համակարգային դասակարգում: Տարբեր հարաբերություններ արտահայտող նախդիրներ:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Попова И.Н., Казакова Ж.А., «Французский язык», Москва, 2008. 2. M. Gregoire, Od. Thievenaz, «Grammaire progressive du francais» (Niveau intermediaire). 3. Cl. Miquel, «Communication progressive du francais» (Niveau debutant), 4. M. Djoulhakian, R. Meliksntian, A. Mouradian, «Manuel de francais», Erevan – 2011.		
1. 0305/Բ 008	2. Վրացերեն -2	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6. 2-րդ կիսամյակ	7. ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է՝ ապահովել և կատարելագործել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը: Դասընթացի խնդիրներն են. 1. ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա, 2. վեր հանել թերություններն ու շտկել դրանք, 3. խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները, 4. հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. գործածելու տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, 2. կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով, 3. գործածելու մասնագիտական տեքստին հատուկ շարահյուսական կառուցվածքները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով, 2. կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները, 3. վերարտադրելու մասնագիտական տեքստը, նաև ներկայացնելու նրա բովանդակությունը սեղմ և ընդարձակ, 4. թարգմանելու մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն և հակառակը, 5. գանազանելու մասնագիտական հատուկ շարահյուսական կառուցվածքները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. գնահատելու, վերլուծելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը, 2. օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. քննարկում /բանավեճ 2. համագործակցային աշխատանք 3. էվրիստիկական մեթոդ		

4. մտագրոհ 5. ինդուկտիվ մեթոդ 6. դեդուկտիվ մեթոդ 7. վերլուծական մեթոդ 8. խոսքային կամ բանավոր մեթոդ 9. գրավոր մեթոդ 10. բացատրական մեթոդ:
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարքն անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Ձևաբանություն: Դերբայ, դերբայական դարձված, ուղղագրությունը: Մակբայ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Կապեր, շաղկապներ, մասնիկներ, ձայնարկություններ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Բաժին 2. Շարահյուսություն. շարահյուսության հիմնական միավորները /բառակապակցություն, նախադասություն, նախադասության անդամներ/: Պարզ նախադասություն, դասակարգումը, նախադասության գլխավոր և երկրորդական անդամները: Բարդ նախադասություն, դասակարգումը, տեսակները: Բաժին 3. Մասնագիտական տեքստ, կառուցվածքը, տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները: Բաժին 4. Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրները: Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքները:
14. Հիմնական գրականության ցանկ 1. Գորգաձև Ռ., Հայերեն-վրացերեն զրուցարան, Երևան-Թբիլիսի, 2004:

1.0001/ Բ 01, Բ03	2.Ֆիզդաստիարակություն	3.0 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.0/0/0	
6.1-ին, 2-րդ կիսամյակներ	7.ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է`</b> հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակչության պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները` ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը լիարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը` դասընթացը նպատակ ունի. • ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը, • նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը, • բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց, • նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը, • զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն:		
Դասընթացի խնդիրներն են. • հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիկական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում, • ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ, • ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում, • ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,		

• ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններն ու հմտությունները:
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. սահմանելու անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները, 2. թվարկելու կոփման կանոնները և բացատրել դրանց նշանակությունը, 3. ներկայացնելու ֆիզիկական դաստիարակության պարապմունքների ժամանակ անվտանգության պահպանման կանոնները, 4. ներկայացնելու առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքները, 5. առանձնացնելու վնասակար սովորությունները և բացատրելու դրանց կործանարար ազդեցությունը անձի մտավոր և ֆիզիկական զարգացման վրա: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. կատարելու նորմատիվներին համապատասխան ֆիզիկական վարժություններ (ակրոբատիկ վարժություններ, վազք, հեռացատկ), 2. ցուցաբերելու շարժողական ընդունակություններն ու ֆունկցիոնալ կարողություններն ուսուցանվող մարզաձևերում, 3. ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. աջակցելու կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս անցկացվող մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի ու սպորտային միջոցառումների կազմակերպմանը, 2. դասընթացի ժամանակ կազմակերպելու թիմային մրցախաղեր տարբեր սպորտաձևերից, 3. կազմելու իր և ընկերների առողջ կենսակերպի ապահովման ուսումնամարզական պարապմունքների պլան:
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքը. Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: Գ7. Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:
11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1.Վերահսկողական ուսումնական պարապմունքներ. • տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ), • մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ), • ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ), • անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ), • ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ), 2.արտաուսումնական պարապմունքներ. • ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում, • վերականգնողական միջոցառումների իրականացում, • մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի, • ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով, • մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում, • մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:
12.Գնահատման մեթոդները և չափանիշները Դասընթացն ավարտվում է 2-րդ կիսամյակում ստուգաբքով: Ստուգաբքը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:
13.Դասընթացի բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. 1-ին կիսամյակ Թեմա 1. Ֆիզիկական դաստիարակություն, նրա դերն ու նշանակությունը ընդհանուր կրթական համակարգում: Ֆիզկուլտուրայի և սպորտի հիգիենիկ հիմունքները: Անձնական հիգիենայի և ֆիզիկական

վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները: Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: **Թեմա 2.** Մարմնի կոփման կանոնները և դրանց նշանակությունը: Վազք: Վազքի տեխնիկայի ուսուցում: Վազք. փոփոխական արագությամբ, արգելքների հաղթահարումով, 60 մ /ցածր մեկնարկից/, 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: Հեռացատկ: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում: Հեռացատկ տեղից: **Թեմա 3.** Սպորտային խաղերի դերն ու նշանակությունը ուսանողի մտավոր և ֆիզիկական դաստիարակության, ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման գործում: Սպորտային խաղ վոլեյբոլ. խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում, գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ուսուցում: Գնդակի վարում և փոխանցում 2 ձեռքով: Զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկայի ուսուցում: **Թեմա 4.** Ուսանողի առողջ կենցաղավարության հիմունքները, նրա արդյունավետության չափանիշները, պայքարը բացասական երևույթների դեմ: Երկկողմանի խաղ (վոլեյբոլ, բասկետբոլ):

2-րդ կիսամյակ

Թեմա 1. Ընդհանուր ֆիզիկական և սպորտային պատրաստության դերը ֆիզիկական դաստիարակության գործում: Շարժողական ընդունակությունների կատարելագործման հիմունքները: Մարմնամարզություն: Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնձի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գործումներ, գլուխկոնձի երկարությամբ: **Թեմա 2.** Ֆիզիկական բեռնվածության ծավալը ուսանողական տարիքում, նրա միջոցով ֆիզիկական զարգացման և մարմնակազմության հնարավորություններն ու շտկման պայմանները: Մարմնամարզություն: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: **Թեմա 3.** Ինքնուրույն պարապմունքների մեթոդական հիմունքները, նրանց ձևերը և տարիքային և սեռային առանձնահատկությունները: Սպորտային խաղ վոլեյբոլ. վերնից սկզբնահարվածի տեխնիկայի ուսուցում: Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս. տեխնիկական և տակտիկական տարրերի ուսուցում: Սպորտային խաղ բասկետբոլ. գնդակին տիրապետման տեխնիկայի ուսուցում, պաշտպանության տեխնիկայի ուսուցում, գնդակի նետում զամբյուղի մեջ: **Թեմա 4.** Սպորտային խաղ վոլեյբոլ: Հարձակողական հարվածի տիրապետման տեխնիկայի ուսուցում: Խաղի պաշտպանության տեխնիկայի ուսուցում: Երկկողմանի խաղ: **Թեմա 5.** Ինքնուրույն պարապմունքների հիգիենան և ինքնահսկումը: Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական վազք: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ: Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ): Երկար վազքի տեխնիկայի առանձնահատկությունները: Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): Հեռացատկ: Հեռացատկ տեղից՝ զույգ ոտքերի հրումով: **Թեմա 6.** Մասնակցությունը սպորտային մրցումների, դրանց ֆիզիկական և հոգևոր դաստիարակչական նշանակությունը: **Թեմա 8.** Ստուգաքային ձևերի նախապատրաստում:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Մամվելյան Լ., Պետրոսյան Գ., Թումանյան Հ., Գրիգորյան Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Եր., 2007.
2. Ազիզյան Գ., Վանեսյան Հ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002:
3. Ավագյան Է., Ֆիզիկական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978:
4. Բաբայան Հ., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
5. Բաբայան Մ., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:
6. Բոյախյան Գ., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005:
7. Թումանյան Հ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:
8. Մելիքսեթյան Ռ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:
9. Մելքոնյան Հ., Կալաջյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007:
10. Նահապետյան Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:

1.0001/ Բ 04, Բ 05	2.Ֆիզդաստիարակություն	3.0 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.0/0/0	
6.3-րդ, 4-րդ կիսամյակներ	7.ստուգաք	
8.Դասընթացի նպատակն է՝ հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը յլարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա		

կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի.

- ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը,
- նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը,
- բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը,
- զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն,
- կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց:

Դասընթացի խնդիրներն են.

- հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիկական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում,
- ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ,
- ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում,
- ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,
- ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու մասսայական սպորտի, բարձր նվաճումների սպորտի և ուսանողական սպորտի առանձնահատկությունները, թվարկել սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման փուլերը,
2. ներկայացնելու ուսանողական սպորտային մրցումների համակարգի կառուցվածքը, ունիվերսիադաների և օլիմպիական խաղերի տարբերությունները, թվարկել նրանց դաստիարակչական հատկությունները, ներկայացնել տեղեկություններ օլիմպիական խաղերի և անվանի մարզիկների վերաբերյալ,
3. հիմնավորելու կոնկրետ սպորտաձևի ընտրումը կանոնավոր պարապմունքների համար, թվարկելու հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համակարգերի կիրառման բնութագրերը,
4. թվարկելու տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները, մեկնաբանելու անհատի վրա դրանց ներգործության բնութագրերը,
5. ներկայացնելու արտադրական ֆիզիկական կուլտուրայի, արտադրական մարմնամարզության առանձնահատկությունները և մեկնաբանելու նրանց անհրաժեշտությունը մասնագիտական գործունեության մեջ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. պահպանելու ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները,
2. սպորտով կանոնավոր պարապելու դեպքում իրականացնել օրգանիզմի վիճակի ինքնահսկողություն կիրառելով նրա հիմնական մեթոդները և ցուցանիշները, վարել ինքնավերահսկման օրագիր,
3. ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ,
4. կատարելու շարժողական գործողություններ ֆիզիկական վարժությունների կատարման մատուցված մեթոդներով և ցուցաբերելու նորմատիվներին համապատասխան արդյունքներ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. դասախոսի անմիջական հսկողությամբ ուսանողների խմբում իրականացնելու թեմատիկ հանձնարակականի փոխադարձ վերահսկողություն,

2. աջակցելու ընկերներին թեմատիկ շարժողական գործողությունների, հնարքների կատարման ժամանակ, ներկայացնելու իր կարծիքը ընկերների ֆիզիկական պատրաստվածության վերաբերյալ, 3. վերլուծելու դասախոսի կողմից իրեն և խմբին տրված անհատական և խմբային հանձնարարականների իրականացման արդյունքները, 4. կազմակերպելու մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի պարապմունքներ, սպորտային միջոցառումներ կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս, 5. կողմնորոշվելու տարբեր իրավիճակներում, ցուցաբերել առաջին բուժօգնություն վնասվածքների դեպքում:
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքը. Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: Գ7. Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:
11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1.Վերահսկողական ուսումնական պարապմունքներ . • տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ), • մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ), • ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ), • անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ), • ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ), 2.արտաուսումնական պարապմունքներ. • ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում, • վերականգնողական միջոցառումների իրականացում, • մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի, • ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով, • մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում, • մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:
12.Գնահատման մեթոդները և չափանիշները Դասընթացն ավարտվում է 4-րդ կիսամյակում ստուգարքով: Ստուգարքը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:
13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. 3-րդ կիսամյակ Թեմա 1. Ուսանողական սպորտը, բուհում սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման առանձնահատկությունները: Թեմա 2. Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: Թեմա 3. Վազքի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում, վազք փոփոխական արագությամբ, վազք 60 մ, 100 մ /ցածր մեկնարկից/: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Հեռացատկ տեղից, տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Վազք արգելքների հաղթահարումով: Վազք 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: Թեմա 4. Ուսանողական սպորտային մրցումների համակարգը, ունիվերսիադաներ, օլիմպիական խաղեր: Օլիմպիզմը և օլիմպիական դաստիարակությունը: Թեմա 5. Սպորտային խաղ վոլեյբոլ, խաղի կանոնների ամրապնդում, սկզբնահարվածի ուսուցում և ամրապնդում: Գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: Թեմա 6. Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ամրապնդում: Թեմա 7. Կանոնավոր պարապմունքների համար սպորտաձևի ընտրման դրդապատճառները և հիմնավորումը: Հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համամակարգերի համառոտ հոգեֆիզիոլոգիական բնութագրերը: Թեմա 8. Սպորտային խաղ սեղանի թենիս, խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում: Թեմա 9. Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ», կանգ թիակների վրա պառկած դրությունից: Թեմա 10. Մարմնամարզություն: Ցատկ այծիկի վրայից` ոտքերը գատած եղանակով: 4-րդ կիսամյակ Թեմա 1. Տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները: Անհատի ֆիզիկական, շարժողական և հոգեկան հատկությունների վրա դրանց ներգործության բնութագրերը: Թեմա 2. Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: Թեմա 3. Մարզապարապմունքների արդյունավետության հսկողությունը, ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները: Թեմա 4.

Սպորտային խաղ վոլեյբոլ: Վերնից սկզբնահարվածի, հարձակողական հարվածի տիրապետման, խաղի պաշտպանության տեխնիկաների ուսուցում և ամրապնդում: Թեմա 5. Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս, նրանց տեխնիկական և տակտիկական տարրերի ամրապնդում: Թեմա 6. Սպորտով կանոնավոր պարապելու դեպքում օրգանիզմի վիճակի ինքնահսկողությունը, նրա հիմնական մեթոդները, ցուցանիշները և ինքնավերահսկման օրագիրը: Թեմա 7. Սպորտային խաղ բասկետբոլ, գնդակին տիրապետելու, պաշտպանության, զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկաների ամրապնդում: Թեմա 8. Սպորտային խաղեր վոլեյբոլ և բասկետբոլ: Երկկողմանի խաղ: Թեմա 9. Առաջին բուժօգնությունը վնասվածքների դեպքում: Թեմա 10. Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ: Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ): Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): Թեմա 11. Հեռացատկ տեղից զույգ ոտքերի հրումով: Թեմա 12. Արտադրական ֆիզիկական կուլտուրա, արտադրական մարմնամարզություն, նրանց նշանակությունը մասնագիտական գործունեության մեջ և նրանց առանձնահատկությունները: Թեմա 13. Ստուգաբային ձևերի նախապատրաստում: 14. Հիմնական գրականության ցանկ. 1. Սամվելյան Լ., Պետրոսյան Գ., Թումանյան Հ., Գրիգորյան Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Եր., 2007. 2. Ազիզյան Գ., Վանեսյան Հ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002: 3. Ավագյան Է., Ֆիզիկական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978: 4. Բաբայան Հ., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000: 5. Բաբայան Մ., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989: 6. Բոյախյան Գ., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005: 7. Թումանյան Հ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002: 8. Մելիքսեթյան Ռ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991: 9. Մելքոնյան Հ., Կալաջյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007: 10. Նահապետյան Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:
--

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

1.0201/ Բ 01	2.Տնտեսագիտության հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.30/0/0	
6. 3-րդ/4-րդ կիսամյակ	7.ստուգաբք	
8.Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակարգված տրամաբանական մտածողություն և տալ տնտեսագիտական ընդհանուր գիտելիքներ: Դասընթացի խնդիրները. 1. ուսանողներին մեկնաբանել տնտեսագիտության հիմնարար օրենքները կատեգորիաները, ցուցանիշները, 2. ուսանողներին բացատրել շուկայական տնտեսության սկզբունքները, 3. ուսուցանել ուսանողներին օգտվել մասնագիտական գրականությունից, օրենքներից, 4. ուսանողներին զինել միկրո և մակրո ցուցանիշները հասկանալու, վերլուծելու կարողություններով:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. սահմանելու և մեկնաբանելու շուկայական տնտեսության առանձնահատկությունները, սկզբունքները, տնտեսական օրենքները, 2. ներկայացնելու շուկայի մոդելները, ռեսուրսների շուկաները և դրանց առանձնահատկությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. ներկայացնելու միկրո, մակրո ցուցանիշները, ֆինանսաբանկային համակարգը, 2. վերլուծելու տնտեսական իրավիճակները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. աշխատելու թիմով, 2. տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, հմտորեն		

ԹԵՄԱ 5. ԱԲ գործիքների կիրառությունը մասնագիտական ոլորտներում և թվային կարիերայի հնարավորություններ.

13. Մասնագիտական ոլորտներում SS և ԱԲ գործիքների կիրառություն:
14. Ֆրիլանս հարթակներ և թվային կարիերայի հնարավորությունները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Հովակիմյան Ա., Սարգսյան Ս. և այլք, «Համակարգչային գրագիտություն», Երևան, 2012:
2. Գյուլումյան Ս., Գալանտերյան Ա., Պողոսյան Մ., «Տեղեկատվական համակարգեր և տեխնոլոգիաներ», Երևան, 2016:
3. Կոստյան Ս., «Excel աղյուսակային խմբագիր (գործնական ձեռնարկ)», ՀԱԱՀ, 2017:
4. Սմբատյան Ա., Կոստյան Ս., «Ինֆորմատիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ», ՀԱԱՀ, 2013:
5. Ikonnikov V.F., Sadovskaya M.N., «Information Technologies in Tourism», Minsk: RIPO, 2014:
6. Божко В.П., Власов Д.В., «Информационные технологии в экономике и управлении», Москва, 2008:

Հղումներ և ռեսուրսներ

7. <https://chat.openai.com>
8. <https://deepai.com>
9. <https://elicit.org>
10. <https://wolframalpha.com>
11. <https://www.tableau.com>
12. <https://researchrabbit.ai>
13. <https://openai.com/dall-e>
14. <https://www.canva.com/features/ai/> (նաև հղում Canva Design School-ին)
15. <https://www.tidio.com>
16. <https://openai.com/blog/chatgpt-plugins>
17. <https://www.microsoft.com/en-us/microsoft-365/excel>
18. <https://www.notion.so/product/ai>
19. <https://www.fiverr.com>
20. <https://www.upwork.com>
21. <https://learn.microsoft.com>
22. <https://support.google.com/a/users>

1. 0104/ Բ 03	2. Կիրառական վիճակագրություն	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 3-րդ/4-րդ կիսամյակ	7. ստուգաթիվ	
8. Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել կիրառական վիճակագրության հիմնական մեթոդների հետ, սովորեցնել ուսանողներին կիրառել վիճակագրության մեթոդները գործնական խնդիրներ լուծելու համար, ծանոթացնել ուսանողներին կիրառական վիճակագրության տարբեր բաժինների հետ:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝		
<i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i>		
1. ձևակերպելու վիճակագրական խնդիրներ,		
2. կառուցելու նմուշին համապատասխան հաճախությունների սյունապատկերը,		
<i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i>		
1. վերլուծելով առկա տվյալները՝ կատարելու վիճակագրական հետևություններ:		
2. ստանալու տարբեր բնութագրիչների գնահատականներ:		
<i>գ. քննիչանքական/փոխանցելի կարողություններ</i>		

1. համակարգելու և վերլուծելու ստացած տեղեկատվությունը, անելու հետևություններ:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Բ5. Դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդներ և առաջադեմ գիտելիքների հետ միասին կիրառելու սեփական գործունեությունը կազմակերպելու և մասնագիտական խնդիրները լուծելու կարողություն: Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ: Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Գ8. Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար: Գ9. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. գործնական պարապմունք 3. ինքնուրույն աշխատանքներ		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարքն անց է կացվում բանավոր:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Նկարագրական վիճակագրություն: Բաժին 2. Նմուշային եղանակ: Բաժին 3. Գնահատման տեսություն: Բաժին 4. Միջակայքային գնահատականներ:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Ահարոնյան Ն., Իսրայելյան Ե., Հավանականությունների տեսության խնդրագիրք, ԵՊՀ, Եր., 2016. 2. Գասպարյան Կ., Վիճակագրության խնդիրների ժողովածու, Եր., 2017: 3. Հարությունյան Ե. և այլք, Հավանականություն և կիրառական վիճակագրություն, Եր., 2000: 4. Ивченко Г. , Медведев Ю. , Математическая статистика, кн. дом Либроком, М., 2014.		

1.0105 / Բ03	2. Մաթեմատիկայի հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6.3-րդ/4-րդ կիսամյակ	7. Ստուգարք	
8. Օրագիրը նպատակ ունի ուսանողներին ծանոթացնել մաթեմատիկայի հիմունքներին՝ որպես ընդհանուր մշակույթի բաղկացուցիչ մասի, ուսանողներին մոտ ձևավորել վերացական մտածողություն:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն. • լուծելու հանրակրթական և հանրամատչելի բնույթի մաթեմատիկական որոշ հարցեր: • ճիշտ մշակելու թվային տվյալները, մասնագիտական վերլուծությունները գրաֆիկների, սանդղակների, մասերով, բ. գործնական մասնագիտական կարողություններ. • տարրական ֆունկցիաների հենքի վրա դասակարգել ֆունկցիաները, սահմանել ֆունկցիայի անընդհատությունը, հաշվել նրա սահմանը: • գործնականում իրականացնել հետազոտական աշխատանքի ճիշտ պլանավորում, • գործնականում իրականացնել հետազոտման մեթոդի ճիշտ ընտրություն: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ. • աշխատել հետազոտական խմբում, • կիրառել գիտելիքները պրակտիկայում:		

վերլուծել խնդիրները և առաջարկել լուծման եղանակներ:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Բ5. Դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդներ և առաջադեմ գիտելիքների հետ միասին կիրառելու սեփական գործունեությունը կազմակերպելու և մասնագիտական խնդիրները լուծելու կարողություն:		
Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:		
Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:		
Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:		
Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:		
Գ8. Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:		
Գ9. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. Դասախոսություններ դիդակտիկ նյութերի կիրառմամբ (համակարգիչ, աղյուսակներ և այլն)		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգաբքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգաբքը համարվում է հանձնված		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Մաթեմատիկա առարկան և մաթեմատիկական լեզու: Բաժին 2. Բազմությունների տեսության տարրեր և թվային բազմություններ: Բաժին 3. Ոչ էվկլիդեսյան երկրաչափություն: Բաժին 4. Վեկտորական հաշիվ: Բաժին 5. Տեքստային խնդիրներ: (տոկոսի, խառնուրդների և շարժման խնդիրներ): Բաժին 6. Հանրահաշվական կորեր(ուղիղ գիծ, շրջանագիծ): Բաժին 7. Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրության տարրեր:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Աթաբեկյան Վ. և ուրիշներ, Մաթեմատիկա հումանիտար մասնագիտությունների համար, ԵՊՀ, Երևան, 2004: 2. Тихомиров Н. Б., Шелехов А. М., Математика, Учебный курс для юристов, Москва, Юрайт, 2000. 3. Քարտաշյան Ա.Հ. Մաթեմատիկա Երևան. Լույս, 1983 4. Стойлова Л.П. Математика Москва, Академия, 2007 5. Лавров И.А., Максимова Л.Л. Задачи по теории множеств, математической логике и теории алгоритмов Москва, Физматлит 1995		

1.0305/ Բ 011	2.Հաղորդակցման հմտություններ	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.30/0/0	
6.3-րդ/4-րդ կիսամյակ	7.ստուգաբք	
8.Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար:		
Դասընթացի խնդիրները՝		
1. Նպաստել սովորողների քննադատական մտածողության ձևավորմանը՝ ստեղծելով ինքնուրույն որոշումներ կայացնելու, բազմաթիվ կարծիքների ու տեսակետների նկատմամբ հարգանք ունենալու, արդյունավետ հաղորդակցվելու մթնոլորտի զարգացմանը:		
2. ուսումնասիրել լեզվի կիրառական և հաղորդակցային հնարավորությունները,		
3. բացահայտել խոսքի ընդհանուր օինաչափությունները,		
4. դրսևորել գրական խոսքի բարձր մշակույթ,		

5. հարստացնել ու զարգացնել լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները. 2. լուսաբանելու լեզվի դերը որպես հաղորդակցական միջոց, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. տիրապետելու որոշակի աշխատանքային հմտությունների և տարբեր միջավայրերում քաղաքակիրթ, բարյացակամ հաղորդակցվելու ունակությունների: 2. ընտրելու հաղորդակցման համար անհրաժեշտ լեզվաոճական միջոցներ. գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. դրսևորելու լեզվական բաժր մշակույթ, հարուստ բառապաշար, լայն աշխարհայացք, մասնագիտական էթիկա, հանրության հետ հաղորդակցվելու ունակություններ:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ: Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Գ8. Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար: Գ9. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. Պասիվ դասխոսություն 2. Ակտիվ դասխոսություն ✓ <i>հարցուպատասխան</i> ✓ <i>զրույց</i> 3. Ինտերակտիվ դասխոսություն ✓ <i>«PowerPoint» համակարգչային ծրագրով տեսադրվագաշարերի ցուցադրում</i> ✓ <i>հարցուպատասխան</i> ✓ <i>բանավեճ</i> ✓ <i>զրույց</i>		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգաթիվ. վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:		
13. Համառոտ բովանդակություն. Թեմա 1. Հաղորդակցության դերն ու նշանակությունը: Թեմա 2. Հաղորդակցման խոչընդոտները. գործնական հաղորդակցում: Թեմա 3. Հաղորդակցման դասակարգումները: Թեմա 4. Ուղղակի և անուղղակի հաղորդակցման ձևերը:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Ավետիսյան Յու., Պաշտոնական գրագրություն, Երևան, 2001: 2. Գաբրիելյան Յու., Լեզվական հաղորդակցության տեսություն, Երևան, 2018: 3. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Երկրորդ հրատարակություն, Երևան, 2009: 4. Պետրոսյան Ա., Գործարար հաղորդակցություն, Երևան, 2003թ.: 5. Պետրոսյան Հ., Մարտիրոսյան Ա., Գործարար և գիտական հայոց լեզու, Երևան, 2015:		

1.0304/ Բ 08	2. Քննական և ստեղծագործական մտածողություն	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.30/0/0	

6. 3-րդ/4-րդ կիսամյակ	7. ստուգարք
8. Դասընթացի նպատակն է ներկայացնել քննական և ստեղծագործական մտածողության առանձնահատկությունները, ուսանողների մոտ ձևավորել ստեղծագործական և քննական մտածողություն:	
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. սահմանելու քննական և ստեղծագործական մտածողությունը 2. մեկնաբանելու քննական և ստեղծագործական մտածողության հիմնական սկզբունքներն ու հատկանիշները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. կիրառելու քննական և ստեղծագործական մտածողության գործիքները: 2. մեկնաբանելու քննական մտածողության տեսակները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. պատրաստելու ինքնուրույն աշխատանքներ և զեկուցումներ:	
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի, Բ5. Դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդներ և առաջադեմ գիտելիքների հետ միասին կիրառելու սեփական գործունեությունը կազմակերպելու և մասնագիտական խնդիրները լուծելու կարողություն: Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ: Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Գ8. Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար: Գ9. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:	
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. անհատական և խմբային առաջադրանքներ 2. ընթերցանություն 3. թեստ 4. ռեֆերատ 5. զրույց լեզվակրի հետ 6. շնորհանդես 7. ինքնուրույն աշխատանք	
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:	
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Ստեղծագործական և քննական մտածողության սահմանումը: Թեմա 2. ստեղծագործական և քննական մտածողության կարևորությունը: Թեմա 3. ստեղծագործական և քննական մտածողության զարգացման փուլերը: Թեմա 4. Ստեղծագործական և քննական մտածողության խրախուսման մեթոդները: Թեմա 5. Քննական և ստեղծագործական մտածողության հմտությունների զարգացման մոտեցումները: Թեմա 6. Ստեղծագործական և քննական մտածողության զարգացման գործիքները: Թեմա 7. Քննական մտածողության տեսակները: Թեմա 8. Ստեղծագործական մտածողության սկզբունքները, հիմնական հատկանիշները:	
14. Հիմնական գրականության ցանկ.	

1. Бутенко А. В., Ходос Е. А. Критическое мышление: метод, теория, практика. Учеб.-метод. пособие. М.: Мирос, 2002. — 176 с.
2. Ивунина Е. Е. О различных подходах к понятию «критическое мышление» // Молодой учёный. — 2009. — № 11. — С. 170—174.
3. Турчин В. Ф. Феномен науки. Кибернетический подход к эволюции. — Изд. 2-е — М.: Словарное издательство ЭТС. — 2000. — 368 с.
4. Халперн Д. Психология критического мышления. — СПб.: Питер, 2000. — 512 с.

1.0302/ Բ 11	2.Մեղիագրագիտություն	3. 2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.30/0/0	
6. 3-րդ/4-րդ կիսամյակ	7.Ստուգարք	
8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողին ներկայացնել հասարակության և մեղիայի փոխհարաբերությունները, դրանց առանձնահատկությունները, ծանոթացնել մեղիայի կողմից հանրային կարծիքի, սոցիալական դիրքորոշման, արժեհամակարգի ձևավորման մեխանիզմներին, ուսումնասիրել հասարակական գիտակցության և մեղիամիջավայրի փոխազդեցությունների շրջանակը, հասկանալ դրանց նախադրյալները և հետևանքները::		
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. հիմնավորելու մեղիայի և տեղեկատվական հասարակության էությունը, դրանց հետ կապված հասկացությունները և հիմնական տեսությունները, 2. որոշելու մեղիայի արժեքաստեղծ գործառույթը, վերջինիս միջոցով հասարակական արժեքների ձևավորման փուլերը, 3. մատնանշելու սոցիալական դիրքորոշման փոփոխման մեխանիզմները՝ մեղիայի դերն ավելի ամբողջական պատկերացնելու համար, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. տարբերակելու մեղիայի հաղորդակցային և գաղափարական բնույթը, 2. գնահատելու տեղեկատվական հասարակության հայաստանյան յուրահատկությունները, 3. հետազոտության ժամանակակից մեթոդներով համեմատելու մեղիատեսակները (մեղիա)՝ ըստ իրենց ազդեցիկության աստիճանի, 4. տարբերակելու ամբոխի կարգավորման/մանիպուլացման մեխանիզմներն ու հնարքները կոնկրետ դեպքերում, գ. քննադատական/փոխանցելի կարողություններ 1. արժևորելու և քննադատական մոտեցում ցուցաբերելու մեղիաարտադրանքին, 2. սեփական հետազոտություններում մեթոդաբանական սկզբունքներով համակարգելու մեղիաազդեցության մեխանիզմները:		
10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի, Բ5. Դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդներ և առաջադեմ գիտելիքների հետ միասին կիրառելու սեփական գործունեությունը կազմակերպելու և մասնագիտական խնդիրները լուծելու կարողություն: Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ: Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Գ8. Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար: Գ9. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու		

ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:
11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. գործնական պարապմունք 3. ինքնուրույն խստանքներ:
12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգաբքն անց է կացվում բանավոր:
13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Հասարակության կառուցվածքը: Հասարակություն և անհատ: Թեմա 2. Մեդիա և մեդիամիջավայր: Մեդիայի հաղորդակցային և գաղափարական բնույթը: Թեմա 3. Տեղեկատվական հասարակություն. ձևավորման նախադրյալները: Թեմա 4. Հասարակական գիտակցություն-մեդիամիջավայր. փոխադարձ ազդեցության բնույթը: Թեմա 5. Հասարակական գիտակցության մանիպուլյացիա: Թեմա 6. Մեդիա և արժեքներ. մեդիայի արժեքաստեղծ գործառնությունը:
14.Հիմնական գրականության ցանկ. 1. Morin E., Au-delà de la globalisation et du développement, société-monde ou empire-monde ? », La revue du MAUSS, 20, pp. 43-53, 2002. 2. Назаров М. М., Массовая коммуникация и общество. Введение в теорию и исследования. — М.: «Аванти плюс», 2003. 3. Поликарпова Е.В., Аксиологические Функции Масс-Медиа В Современном Обществе, Ростов-на-Дону, 2002.

1.0305/ F 003	2. Ռուսաց լեզու -3	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.0/30/0	
6. 3-րդ/4-րդ կիսամյակ	7.ստուգաբք	
8.Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ 2 փուլերում ձեռք բերված գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր խոսքի ունակություններ: Դասընթացի խնդիրները. 1. խորացնել և հարստացնել ուսանողների խոսակցական բառապաշարը, 2. ակտիվացնել բանավոր խոսքը և շփման կարողությունները, 3. զարգացնել ռուսերենի ուղղախոսության նորմերը, խոսքի մասերի կառուցվածքային և գործառական առանձնահատկությունները, 4. զարգացնել ռուսերենով ազատ հաղորդակցվելու տեխնիկան:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու ռուսերենի բառակազմության միջոցները: 2. կիրառելու հոմանիշները, հականիշները և համանունները համատեքստում: 3. գործածելու ռուսերենին բնորոշ խոսակցական կառույցներ: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. ընդհանրացնելու լեզվի նախնական քերականական և բառապաշարային գիտելիքները: 2. վարելու գրույց/երկխոսություն՝ կիրառելով ուղղախոսության և շարահյուսության կանոններ: 3. արտահայտելու և հիմնավորելու սեփական կարծիքը, կազմելու գործնական նամակներ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. ունկնդրելու և վերարտադրելու գրույց/երկխոսություն: 2. պատրաստելու ինքնուրույն աշխատանքներ և զեկուցումներ: 3. բանավիճելու մասնագիտական թեմաներով:		
10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ: Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցված բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ		

նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, դեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Գ8. Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար: Գ9. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. անհատական և խմբային առաջադրանքներ 2. ընթերցանություն 3. թեստ 4. ռեֆերատ 5. զրույց լեզվակրի հետ 6. շնորհանդես 7. ինքնուրույն աշխատանք		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Շարահյուսություն: Թեմա 2. Ուղղագրության հիմնական կանոնները: Թեմա 3. Մասնագիտական տեքստ:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Русский язык. Под общ. ред. к. ф. н. доцента Лалаян С. А. Ер., изд-во ЕГУ, 2018. 2. Русский язык. Под общ. ред. Л. М. Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004. 3. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация Речь., П. Б. Балаян, Л. А. Тер-Саркисян, Б. С. Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015. 4. Учебные пособия по специальности.		

1.0201/ Բ 006	2. Անգլերեն -3	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.0/30/0	
6. 3-րդ/4-րդ կիսամյակ	7. ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ 2 փուլերում ձեռք բերված գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր խոսքի ունակություններ: Դասընթացի խնդիրները. 1. խորացնել և հարստացնել ուսանողների խոսակցական բառապաշարը, 2. ակտիվացնել բանավոր խոսքը և շփման կարողությունները, 3. զարգացնել անգլերենի ուղղախոսության նորմերը, խոսքի մասերի կառուցվածքային և գործառական առանձնահատկությունները, 4. զարգացնել անգլերենով ազատ հաղորդակցվելու տեխնիկան:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու անգլերենի բառակազմության միջոցները: 2. կիրառելու հոմանիշները, հակառիշները և համանունները համատեքստում: 3. գործածելու անգլերենին բնորոշ խոսակցական կառույցներ: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. ընդհանրացնելու լեզվի նախնական քերականական և բառապաշարային գիտելիքները: 2. վարելու զրույց/երկխոսություն՝ կիրառելով ուղղախոսության և շարահյուսության կանոններ: 3. արտահայտելու և հիմնավորելու սեփական կարծիքը, կազմելու գործնական նամակներ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ		

1. ունկնդրելու և վերարտադրելու գրույց/երկխոսություն: 2. պատրաստելու ինքնուրույն աշխատանքներ և զեկուցումներ: 3. բանավիճելու մասնագիտական թեմաներով:
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ: Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, դեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Գ8. Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար: Գ9. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. անհատական և խմբային առաջադրանքներ 2. ընթերցանություն 3. թեստ 4. ռեֆերատ 5. գրույց լեզվակրի հետ 6. շնորհանդես 7. ինքնուրույն աշխատանք
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Ընդհանուր անգլերեն՝ շեշտադրելով բառապաշարի ընդլայնումը: Թեմա 2. Խոսակցական անգլերենին բնորոշ կառույցների ուսուցում: Թեմա 3. Բանավոր խոսք՝ ուղղված ուսանողների անհատական ստեղծագործական մտքի ու վերլուծական ունակությունների խթանմանը:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Harutyunyan K., Mkrтчhyan H., Bagumyan L., Do you Speak English? Yerevan, Lusakn, 2015. 2. Mkhitarian K., Gevorgyan A., Develop Your Vision of English. Yerevan: Antares, 2017. 3. Vince M., First Certificate Language Practice. USA: Macmillan, 2010. 4. Alexander L.G., Fluency In English, Longman, 1967. 5. Alexander L.G., For and Against, Longman, 1969.

ՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ /ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ

1.0403/Բ 03	2. Նկարչություն -1	3. 9 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/շաբ.	5. 8/82/0	
6.1-ին կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	
8. Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել նկարչության հնարավորություններին, ձևավորել տարածական մտածելակերպ: Ուսումնասիրել և նկարչության օրենքներին համապատասխան կառուցել երկրաչափական մարմիններ, կենցաղային իրեր ու առարկաներ: Սովորեցնել ջրաներկով պատկերել նատյուրմորտ և բնանկար, կարճատև գծանկարներ, նախանկարներ:		
Դասընթացի խնդիրները.		
1. սովորեցնել կառուցել երկրաչափական մարմիններ, 2. սովորեցնել ընկալել ու յուրացնել միջավայրի ազդեցությունը առարկաների վրա ու հակառակը, լուսաստվերային փոխազդեցություններին, տոնային ու գծային կառուցումներին, 3. ուսումնասիրել վարպետների աշխատանքները, 4. ծանոթացնել նյութերի նրբություններին, նկարչական պարագաներին, 5. նախապատրաստել ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի, 6. յուրացնել ջրաներկի տարբեր տեխնիկաները, կիրառման եղանակները, 7. գծանկարի գծատոնային արտահայտչամիջոցներով, ճիշտ տոնային համադրումներով հասնել կոնստրուկտիվ, վերլուծական, լուսաստվերային պլաստիկայի, առարկաների կերպավորմանն ու ճիշտ տեղադրմանը, 8. կատարել պարզ նատյուրմորտներ ու կարճատև բնանկարներ:		
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝		
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.		
1. ներկայացնելու նկարչության դերն ու նշանակությունը, հիմնական հասկացությունները, 2. թվարկելու նկարչության տարրական հասկացությունները, 3. նկարագրելու աշխատանքի ընթացքը, նաև մեկ գույնի տոներով աշխատելու տեխնիկան, 4. բացատրելու լույսի ու ստվերի, գծի տոնի համակցումը, 5. ցուցադրելու առարկաների՝ գրագետ չափագրման և թղթի մեջ կառուցման ձևերը, 6. մեկնաբանելու համաչափության մասին մոտեցումները, 7. բնութագրելու գունային և տոնային ներդաշնակ համադրման սկզբունքներն ու կատարման ձևերը:		
բ. գործնական մասնագիտական կարողություններ.		
1. գծի տոնի միջոցով ստանալու նյութականություն, 2. կատարելու գունատոնային աշխատանք՝ թղթի մեջ գրագետ տեղադրելով պարզ կենցաղային իրեր և տարբեր առարկաներ, 3. հարթ մակերեսի վրա ստանալու եռաչափ ծավալներ՝ օգտագործելով գիծը, տոնը, կիսատոնը՝ լույսն ու ստվերը ստանալու համար, 4. կատարելու նախանկարներ՝ օգտագործելով ջրաներկին հատուկ տարբեր նկարչական տեխնիկաներ, 5. ստանալ ծավալատարածական հորինվածք՝ օգտագործելով երկրաչափական ծավալներ, 6. կատարել նախանկարներ կենցաղային իրերից, 7. ստեղծել ինտերիերում աթոռի և շիրմայի գծանկար-սկետչ:		
գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.		
1. վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորել հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով: 2. իրականացնելու համատեղ աշխատանք թիմում, 3. կատարելու գունային ճիշտ վերլուծություններ, 4. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույնները.		
Ս2. Ներկայացնելու դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունները, տեսությունները և մեթոդները՝ առաջադեմ գիտելիքների հետ միասին:		
Բ1. Ցուցաբերել ստեղծագործական մոտեցում և առաջարկել ինքնուրույն լուծումներ միջավայրի,		

արդյունաբերական կամ հագուստի դիզայնի նախագծերի մշակման ժամանակ՝ հաշվի առնելով դիզայնի ոլորտում եղած ժամանակակից միտումները և սպառողի (պատվիրատուի) պահանջները: F2. Ստեղծել և վերարտադրել տեսապատկերային միջոցներ (տեսապատկերային գովազդներ)՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ և գործիքներ /գծագրություն, հեռանկար, մանրակերտի ստեղծում, ժամանակակից տառատեսակներ, լուսանկարչություն, եռաչափ մոդելավորում/: F3. Ինքնուրույն ընտրել դիզայն նախագծի տեխնիկական հաշվարկի եղանակներ և հիմնավորել դրանք՝ կիրառելով դիզայնում կոմպոզիցիայի վիզուալ կազմակերպման, ծավալագոյացման, ֆունկցիոնալ վերլուծության, նյութերի և դրանց արտադրության, գունանկարչության, գծանկարչության, գունատեսության, էրգոնոմիկայի, բիոնիկայի և արխիտեկտոնիկայի սկզբունքները: F4. Մակետավորման և մոդելավորման աշխատանքներում արհեստավարժ կիրառել քանդակի, գծանկարչության և գունանկարչության սկզբունքները և հնարները: F5. Դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդներ և առաջադեմ գիտելիքների հետ միասին կիրառելու սեփական գործունեությունը կազմակերպելու և մասնագիտական խնդիրները լուծելու կարողություն: G4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: G5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, դեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:	11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. խոսքային մեթոդները, 2. գնական մեթոդները, 3. գործնական մեթոդները, 4. հետաքրքրությունների խթանման մեթոդները, 5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները, 6. համագործակցային ուսուցման մեթոդները, 7. քննադատական մտածողության մեթոդները, 8. խմբային աշխատանքի մեթոդները, 9. ինքնուրույն աշխատանքի մեթոդները, 10. վերահսկողության մեթոդները: 12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Երկու ընթացիկ քննություններ՝ 9 միավոր առավելագույն արժեքով, որից՝ 1-ին ընթացիկ քննությանը տրվում է 4 միավոր: 2 միավոր տրվում է գծանկարչության լսարանային երկու առաջադրանքների համար և 2 միավոր՝ գունանկարչության լսարանային երկու առաջադրանքների համար: Միավորների քայլը 0,2 է: 2-րդ ընթացիկ քննությանը տրվում է 5 միավոր: 2 միավոր տրվում է գծանկարչության լսարանային երկու առաջադրանքների համար, 2 միավոր՝ գունանկարչության լսարանային երկու առաջադրանքների համար և 1 միավոր էսքիզավորման տեխնիկայի (սկետչ) լսարանային ժամերի շրջանակում կատարված աշխատանքների համար: Միավորների քայլը 0,2 է: Ընթացիկ ստուգումները 8 միավոր առավելագույն արժեքով, որից 3 միավոր տրվում է գծանկարչության ընթացիկ աշխատանքներին (հանձնարարվում է թեմատիկ երկու առաջադրանք), 3 միավոր տրվում է գունանկարչության ընթացիկ աշխատանքներին (հանձնարարվում է թեմատիկ երկու առաջադրանք) և 2 միավոր՝ էսքիզավորման տեխնիկայի (սկետչ) ընթացիկ աշխատանքներին (հանձնարարվում է թեմատիկ երկու առաջադրանք): Միավորների քայլը 0,2 է: Ինքնուրույն աշխատանքը 3 միավոր առավելագույն արժեքով, որից 1 միավոր տրվում է գծանկարչության նախանկարների և ձեպանկարների որակյալ կատարման համար (նվազագույնը 20 նախանկար և ձեպանկար), 1 միավոր տրվում է գունանկարչության նախանկարների և ձեպանկարների որակյալ կատարման համար (նվազագույնը 20 նախանկար և ձեպանկար) և 1 միավոր՝ էսքիզավորման տեխնիկայի (սկետչ) շրջանակում կատարված նախանկարների և ձեպանկարների որակյալ կատարման համար (նվազագույնը 20 նախանկար և ձեպանկար): Միավորների քայլը 0,2 է:
---	---

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

1. Գծանկարչություն

Թեմա 1.1. Նատյուրմորտ գիպսե երկու երկրաչափական մարմիններով՝ բուրգ, գլան և կտորի ծալքերով: **Թեմա 1.2.** Նատյուրմորտ գիպսե երկու երկրաչափական մարմիններով՝ գունդ, խորանարդ և կտորի ծալքերով: **Թեմա 1.3.** Նատյուրմորտ գիպսե երեք երկրաչափական մարմիններով և մրգով՝ կտորի համադրությամբ: **Թեմա 1.4.** Նատյուրմորտ գիպսե երկրաչափական մարմնով և որևէ կենցաղային իրով՝ կտորի համադրությամբ:

2. Գունանկարչություն

Թեմա 2.1 Նատյուրմորտ՝ երկրաչափական առարկայով, սափորով (գունային կոնտրաստներով), մրգերով, կտորի ծալքերով: **Թեմա 2. 2** Նատյուրմորտ կարպետով, ծղոտե ափսեով, չորացրած բույսերով: **Թեմա 2. 3** Նատյուրմորտ գիպսե երկրաչափական մարմիններով, հակադարձ գույների կտորի ծալքերով: **Թեմա 2. 4** Ինտերիերում առարկաների պատկերում՝ ոճավորված աշխատանք:

3. Էսքիզավորման տեխնիկա (սկեսոյ)

Թեմա 3.1. Ուսանողի ծանոթացումը առարկայի հետ: Էսքիզավորման տեխնիկայի դերն ու նշանակությունը դիզայնում: **Թեմա 3.2.** Գծի նշանակությունը Էսքիզավորման տեխնիկայի մեջ, վարժությունների պարզաբանում՝ չորս տարբեր վարժանքների միջոցով: **Թեմա 3.3** Ծանոթացում նյութերի հետ, որոնցով կատարվում է առաջնային մտքի արտահայտումը և ուսումնասիրվում է նյութերի առանձնահատկությունները: **Թեմա 3.4.** Մեկ կետով հեռանկարի կատարում: Երկու և երեք հավաքման կետերով հեռանկարի կառուցում: **Թեմա 3.5.** Լույս ու ստվերի կառուցման եղանակները, առանձնահատկությունները, դերն ու նշանակությունը Էսքիզավորման տեխնիկայի մեջ:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Барщ А., Наброски и зарисовки, М., 1970.
2. Бесчастнов Н., Изображение растительных мотивов, М., 2004.
3. Джованни Чиварди: Рисование. Полное руководство, М., 2015:
4. Кузин В., Наброски и зарисовки, М., 1981.
5. Кузин В., «Рисунок. Наброски и зарисовки, М.: Академия, 2004.
6. Материалы и техники рисунка. Под ред. В. А. Королева, М., 1984.
7. Николай Белов: Основы техники рисунка Издательство: Харвест, Минск, 2012:
8. Ростовцев Н. Н., Учебный рисунок, М., 1976.
9. Сергеев А., Учебный натюрморт, М., 1955.
10. Ломов С., С. Аманжолов, Цветоведение. Учебное пособие, М., 2015.

1. 0403/Բ 12	2. Գծագրություն և հեռանկար	3. 9 ECTS կրեդիտ
4. 6 ժամ /շաբ.	5. 10/80/0	
6. 1-ին կիսամյակ	7. Առանց ընթացիկ գնահատման	
8. Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել գծագրության և հեռանկարչության կառուցման եղանակներն ու օրինաչափությունները, պրոյեկտման առանձնահատկությունները: Սովորեցնել ստանալ հարթապատկերների և ծավալների փոխհարաբերություններ: Սովորեցնել կառուցել տրված դետալների երեք պրոյեկցիաները և դրանց միջոցով կառուցել դետալների իրական պատկերը: Դասընթացի խնդիրները. 1. սովորեցնել գծագրերի կառուցման ճիշտ ձևերը, 2. սովորեցնել հեռանկարի կառուցման եղանակները և օրինաչափությունները, 3. սովորեցնել կառուցելու պարզ և բարդ մակետներ, 4. ներկայացնել պարզ և բարդ կտրվածքների առանձնահատկությունները, 5. ներկայացնել հարթությունների վրա կետի, ուղիղների և հարթ պատկերների պրոյեկտման առանձնահատկությունները, 6. ճշգրիտ չափումների միջոցով ստանալ հարթապատկերների և ծավալների փոխհարաբերությունները, 7. ստանալ հարթապատկերների և ծավալների փոխհարաբերություններ հեռանկարում, 8. սովորեցնել ճիշտ հեռանկարի կառուցման եղանակները և օրինաչափությունները էքստերիերում, 9. սովորեցնել գծագրելու, չափադրելու տարբեր առարկաներ: 9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և խնացություն. 1. ցուցադրելու հարթ պատկերների գծագրումը, 2. ներկայացնել շրջանագծերի խառը, ներքին և արտաքին սահուն միացումները, 3. տարածության մեջ պատկերացնելու հարթ և ծավալային մարմինների պրոյեկտումը,		

4. կունենա պատկերացումներ երեք պրոյեկցիաների միջոցով դետալների իրական տեսքի պատկերման մասին, 5. կներկայացնի դետալների կտրվածքների առանձնահատկությունները, բ. գործնական մասնագիտական կարողություններ. 1. կատարելու շրջանագծերի խառը, ներքին և արտաքին սահուն միացումներ, 2. հարթությունների վրա կառուցելու կետերի և ուղիղների պրոյեկտում, 3. պրոյեկտող հարթությունների մեջ պատկերելու առարկաների պրոյեկցիաները, 4. պրոյեկտող հարթությունների միջոցով գտնելու կետերի, ուղիղների և հարթությունների հատման գծերը և նրանց իրական տեսքերը, 5. կառուցել պարզ դետալների դիմետրիկ և իզոնոմետրիկ տեսքերը, 6. կառուցելու ներքին կահավորանքը ինտերիերում՝ պահպանելով հեռանկարչության կանոնները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ. 1. ճանաչելու գծագրական գործիքները և տիրապետելու նրանցով աշխատելու հմտություններին:
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Ս2. Ներկայացնելու դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունները, տեսությունները և մեթոդները առաջադեմ գիտելիքների հետ միասին: Բ1. Ցուցաբերել ստեղծագործական մոտեցում և առաջարկել ինքնուրույն լուծումներ միջավայրի, արդյունաբերական կամ հագուստի դիզայնի նախագծերի մշակման ժամանակ՝ հաշվի առնելով դիզայնի ոլորտում եղած ժամանակակից միտումները և սպառողի (պատվիրատուի) պահանջները: Բ2. Ստեղծել և վերարտադրել տեսապատկերային միջոցներ (տեսապատկերային գովազդներ)՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ և գործիքներ /գծագրություն, հեռանկար, մանրակերտի ստեղծում, ժամանակակից տառատեսակներ, լուսանկարչություն, եռաչափ մոդելավորում/: Բ3. Ինքնուրույն ընտրել դիզայն նախագծի տեխնիկական հաշվարկի եղանակներ և հիմնավորել դրանք՝ կիրառելով դիզայնում կոմպոզիցիայի վիզուալ կազմակերպման, ծավալագոյացման, ֆունկցիոնալ վերլուծության, նյութերի և դրանց արտադրության, գունանկարչության, գծանկարչության, գունատեսության, էրգոնոմիկայի, բիոնիկայի և արխիտեկտոնիկայի սկզբունքները: Բ4. Մակետավորման և մոդելավորման աշխատանքներում արհեստավարժ կիրառել քանդակի, գծանկարչության և գունանկարչության սկզբունքները և հնարները: Բ5. Դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդների և առաջադեմ գիտելիքների հետ միասին կիրառելու սեփական գործունեությունը կազմակերպելու և մասնագիտական խնդիրները լուծելու կարողություն:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. խոսքային մեթոդները, 2. գննական մեթոդները, 3. գործնական մեթոդները, 4. հետաքրքրությունների խթանման մեթոդները, 5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները, 6. համագործակցային ուսուցման մեթոդները, 7. քննադատական մտածողության մեթոդները, 8. խմբային աշխատանքի մեթոդները, 9. ինքնուրույն աշխատանքի մեթոդները, 10. վերահսկողության մեթոդները:
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Գնահատվում է առանց ընթացիկ գնահատման՝ առավելագույն 20 միավոր՝ Եզրափակիչ գնահատում՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Գնահատվում է հաստատված հարցատոմսերի հիման վրա, որից 1 միավոր տրվում է դիմային պրոյեկցիային, 2 միավոր տրվում է հորիզոնական պրոյեկցիային, 2 միավոր տրվում է կողային պրոյեկցիային, 4 միավոր՝ արքսիոնոմետրիային: Միավորների քայլը 0,5: Ընթացիկ ստուգումներ՝ 8 միավոր առավելագույն արժեքով, որից 3 միավոր տրվում է գծագրության ընթացիկ աշխատանքներին (լծորդումներ), 2 միավոր տրվում է գծագրության ընթացիկ աշխատանքներին (պրոյեկցիաներ և արքսիոնոմետրիա) և 4 միավոր տրվում է հեռանկարի ընթացիկ աշխատանքներին (ցանցի մեթոդ, ինտերիերի և էքստերիերի հեռանկարներ): Միավորների քայլը 0,5 է: Ինքնուրույն աշխատանք՝ 3 միավոր առավելագույն արժեքով, որից 1 միավոր տրվում է ճշգրիտ լծորդումներ գծագրելու համար (10 հատ), 1 միավոր տրվում է երկրաչափական մարմինների գծագրման համար:

պրոյեկցիաներ և աքսիոնոմետրիա (իզոմետրիկ, դիմետրիկ), 1 միավոր տրվում է երկրաչափական մարմինների պարզ կտրվածքների գծագրելու համար՝ պրոյեկցիաներ և աքսիոնոմետրիա (իզոմետրիկ, դիմետրիկ): Միավորների քայլը 0,5:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

ԹԵՄԱ 1. Ներածություն: **ԹԵՄԱ 2.** Լծորդումներ, շրջանագծի շոշափողներ և կանթաձև կորագծեր: **ԹԵՄԱ 3.** Դյուրերի /ցանցի մեթոդ/ առարկաների պատկերումը հարթությունների վրա, ստվերի պատկերում: **ԹԵՄԱ 4.** Ընդհանուր տեղեկություն պրոյեկցիաների մասին: **ԹԵՄԱ 5.** Կետերի, ուղիղների, հարթ մարմինների պրոյեկտումը հարթությունների վրա: **ԹԵՄԱ 6.** Աքսիոնոմետրիկ պրոեկցիաներ: **ԹԵՄԱ 7.** Ինտերիերի կառուցումը հեռանկարչությունում, ինտերիերի պատկերումը: **ԹԵՄԱ 8 .** Երկրաչափական մարմինների պրոյեկտումը հարթությունների վրա: **ԹԵՄԱ 9 .** Երկրաչափական մարմինների մակերեսին պատկանող կետերի կառուցում (պրիզմա, քառանկյուն բուրգ, գլան, կոն, գունդ): **ԹԵՄԱ 10.** Երկրաչափական մարմինների փովածքների կառուցում (գլան, կոն, բուրգ, պրիզմա): **Թեմա 11.** Էքստերիեր / ճարտարապետների մեթոդով/ **ԹԵՄԱ 12.** Երկրաչափական մարմինների պարզ կտրվածքներ: **ԹԵՄԱ 13.** Երկրաչափական մարմինները կտրել պրոյեկտող հարթություններով (կոն, բուրգ, գլան, գունդ, պրիզմա): **ԹԵՄԱ 14.** Դետալների և երկրաչափական մարմինների բարդ կտրվածքներ:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Գորդոն Վ. Օ., Գծագրական երկրաչափության դասագիրք և խնդրագիրք, Եր., 1960:
2. Բոգոլյուբով Ս. Կ., Վունով Ա. Վ., Տեխնիկական գծագրության դասընթաց, Եր., 1972:
3. Короев Ю. Н., Котов Ю. В., Архитектура /изд. Архитектура- С, 2014.
4. Крилов А. Ф., Черчение, рисование, изд. Высшая школа, 1980.
5. Розов С.В., Курс черчения, изд. Архитектура- С, 2014.

1. 0105/Բ20	2. Պլաստիկ անատոմիա	3. 3 ECTS կրեդիտ
4. 2 ժամ /շաբ.	5. 14/16/0	
6. 1-ին կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	
8. Դասընթացի նպատակն է. տալ գիտելիքներ մարդու մարմնի կառուցվածքի, հենաշարժիչ և մկանային համակարգի կազմության համապատասխան մարմնի մասերի շարժման վերաբերյալ, ներկայացնել մկանային համակարգի օրինաչափ փոփոխությունները, որոնք առաջանում են մարդու մարմնի տարբեր դիրքերում: Դասընթացի խնդիրները. 1. մարդու անատոմիական կմախքի պատկերում, 2. մարդու կմախքի գծային կառուցում, 3. մարդու մկանային համակարգի պատկերում տարբեր դիրքերում:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն. 1. որոշելու և բացատրելու մարդու մարմնի համաչափությունները, 2. նկարագրելու մարդու մարմնի կառուցվածքը, արտաքին ձևերը, 3. մեկնաբանելու մարդու մարմնի համաչափական օրենքները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. նկարելու մարդու մարմնի կառուցվածքը, արտաքին ձևերը, 2. նկարելու մարդու կմախքի փոփոխությունները տարբեր դիրքերում: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ. 1. կատարելու ինքնուրույն և խմբային աշխատանքներ, կատարելու դրանց վերլուծություններ և ներկայացնելու եզրակացություններ, 2. կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույունքները. Բ1. Ցուցաբերել ստեղծագործական մոտեցում և առաջարկել ինքնուրույն լուծումներ միջավայրի, արդյունաբերական կամ հագուստի դիզայնի նախագծերի մշակման ժամանակ՝ հաշվի առնելով դիզայնի ոլորտում եղած ժամանակակից միտումները և սպառողի (պատվիրատուի) պահանջները: Բ2. Ստեղծել և վերարտադրել տեսապատկերային միջոցներ (տեսապատկերային գովազդներ)՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ և գործիքներ /գծագրություն, հեռանկար, մանրակերտի ստեղծում, ժամանակակից առատեսակներ, լուսանկարչություն, եռաչափ մոդելավորում/:		

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. պասիվ դասախոսություն, 2. ակտիվ դասախոսություն՝ հարց ու պատասխան, զրույց, 3. ինտերակտիվ դասախոսություն՝ «Power Point» համակարգչային ծրագրով դրվագների ցուցադրում, 4. հարց ու պատասխան, բանավեճ, զրույց:
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Երկու ընթացիկ քննություններ՝ 8 միավոր առավելագույն արժեքով, որից 1-ին ընթացիկին տրվում է 4, իսկ 2-րդին՝ 4 միավոր: Միավորների քայլը 0.2: Ընթացիկ ստուգումներ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0.2: Ինքնուրույն աշխատանք՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0.2:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ներածություն: Պլաստիկ անատոմիա առարկայի նպատակը, խնդիրները: Թեմա 2. Մեծահասակի և երեխայի անատոմիական առանձնահատկությունները: Ոսկրային համակարգ: Կմախք: Կմախքի առանձին մասերի պլաստիկ նշանակությունը /գանգ, ողնաշար, կրծքավանդակ, ուսագոտի, կոնք, վերին և ստորին ազատ վերջույթներ/: Թեմա 3. Սկանային համակարգի պլաստիկ նշանակությունը: Թեմա 4. Մարմնի ընդհանուր և տարբեր մասերի համաչափությունները: Թեմա 5. Մարմնի ձևերի փոփոխությունները շարժումների ժամանակ:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Այվազյան Մ. Պ., Պլաստիկ անատոմիայի հիմունքները, Եր., 1963. 2. Барчай Ене, Анатомия для художников Эксмо, М., 2008. 3. Кале-Жермен Б., Твое тело Астель, М., 2008. 4. Рабинович М. Ц., Пластическая антомия человека, четвероногих и птиц Высшая школа М., 1978.

1. 0403/Բ 01	2. Գունատեսություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 2 ժամ /շաբ.	5. 4/26/0	
6. 1-ին կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	
8. Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ ընդհանուր տեղեկություններ գույնի, նրա ֆիզիկական հիմքի, քրոմատիկ, աքրոմատիկ, համադիր և հակադիր գույների մասին: Մովորեցնել ստեղծագործական աշխատանքներում ճիշտ օգտագործել գունային հարաբերությունները: Դասընթացի խնդիրները. • ներկայացնել գույնի կիրառման հիմնախնդիրները դիզայնում, • սովորեցնել գունային հարաբերությունների ճիշտ օգտագործում՝ ելնելով գունատեսության առանձնահատկություններից, • կատարել գույների համատեղում, • կիրառել գունային կոմպոզիցիայի հիմնական ֆունկցիաները դիզայնում:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն. 1. թվարկելու հիմնական գույները, 2. ներկայացնելու գույների ճիշտ օգտագործումը, իրար հետ համադրելու և խառնուրդներ ստանալու եղանակները, 3. ներկայացնելու գունային համակարգերը և մոդելները, 4. թվարկելու գույնի հիմնական բնութագրումները և դասակարգումը ըստ հոգեբանական ազդեցության բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. կատարելու գունային ճիշտ վերլուծություններ, 2. ինտերիերում կիրառել գույնի որոշակի օրինաչափությունները, հոգեբանական և ֆիզիկական ազդեցությունը, 3. ցուցադրել գունային ներդաշնակությունը և հակադրությունը: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ. 1. իրականացնելու համատեղ աշխատանք թիմում, 2. կատարելու գունային ճիշտ վերլուծություններ, 3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Ա1. Միջավայրի, արդյունաբերական և հագուստի դիզայնի խնդիրների լուծման ընթացքում ցուցաբերել գեղագիտության, արվեստի և դիզայնի տեսության ու պատմության իմացություն: Ա2. Ներկայացնելու դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունները, տեսությունները և մեթոդները առաջադեմ գիտելիքների հետ միասին: Բ1. Ցուցաբերել ստեղծագործական մոտեցում և առաջարկել ինքնուրույն լուծումներ միջավայրի, արդյունաբերական կամ հագուստի դիզայնի նախագծերի մշակման ժամանակ՝ հաշվի առնելով դիզայնի ոլորտում եղած ժամանակակից միտումները և սպառողի (պատվիրատուի) պահանջները: Բ2. Ստեղծել և վերարտադրել տեսապատկերային միջոցներ (տեսապատկերային գովազդներ)՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ և գործիքներ /գծագրություն, հեռանկար, մանրակերտի ստեղծում, ժամանակակից տառատեսակներ, լուսանկարչություն, եռաչափ մոդելավորում/: Բ3. Ինքնուրույն ընտրել դիզայն նախագծի տեխնիկական հաշվարկի եղանակներ և հիմնավորել դրանք՝ կիրառելով դիզայնում կոմպոզիցիայի վիզուալ կազմակերպման, ծավալագոյացման, ֆունկցիոնալ վերլուծության, նյութերի և դրանց արտադրության, գունանկարչության, գծանկարչության, գունատեսության, էրգոնոմիկայի, բիոնիկայի և արխիտեկտոնիկայի սկզբունքները: Բ5. Դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդներ և առաջադեմ գիտելիքների հետ միասին կիրառելու սեփական գործունեությունը կազմակերպելու և մասնագիտական խնդիրները լուծելու կարողություն:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. խոսքային մեթոդները (դասախոսությունը, բացատրումը, ներկայացումը, ընթերցումը, երկխոսությունը և այլն), 2. զննական մեթոդները (գծագրերի, նկարների և զննական պարագաների դիտումն ու ցուցադրումը և այլն), 3. գործնական մեթոդները (առաջադրանքները, վարժությունները, տնային առաջադրանքի կատարումը և այլն), 4. հետաքրքրությունների խթանման մեթոդները (հետաքրքիր դեպքեր հայ և համաշխարհային արվեստի և մշակույթի պատմությունից՝ արվեստագետների կյանքի ներկայացմամբ՝ հուզական խթանում և այլն), 5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները (խճանկար, ուսումնական բանավեճ, դերային խաղ, աշխատանք սկզբնաղբյուրների հետ և այլն), 6. համագործակցային ուսուցման մեթոդները (թիմային առաջադրանքների կատարում, խմբային ուսումնասիրություն և այլն), 7. քննադատական մտածողության մեթոդները (տնային աշխատանքների վերլուծություններ և այլն), 8. խմբային աշխատանքի մեթոդները (մտածիր – գույգ կազմիր – քննարկիր, ձևակույտ, ուսումնական մրցույթ և այլն), 9. ինքնուրույն աշխատանքի մեթոդները (ինքնուրույն աշխատանք սկզբնաղբյուրներով, ինտերնետային կայքերով և այլն), 10. վերահսկողության մեթոդները (գրավոր, բանավոր վերահսկողություն, ծրագրավորված և ոչ ծրագրավորված և այլն): 11. խոսքային մեթոդները (դասախոսություն, բացատրում, պատմում և այլն):
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Երկու ընթացիկ քննություններ՝ 9 միավոր առավելագույն արժեքով, որից 1-ին ընթացիկին տրվում է 4, իսկ 2-րդին՝ 5 միավոր: Միավորների քայլը 0.2: Ինքնուրույն աշխատանք՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0.2: Մասնակցություն՝ 3 միավոր առավելագույն արժեքով:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ներածություն: Գույնի տեսություն: Գույնի կիրառման հիմնախնդիրները դիզայնում: Թեմա 2. Գունային համակարգեր և մոդելներ: Թեմա 3. Գույնի հիմնական բնութագրումները և դասակարգումը ըստ հոգեբանական ազդեցության: Թեմա 4. Գունային ներդաշնակություն և հակադրություն: Թեմա 5. Գունային կոմպոզիցիայի հիմնական ֆունկցիաները դիզայնում: Թեմա 6. Ինտերիերում գույնի կիրառման որոշակի օրինաչափությունները, հոգեբանական և ֆիզիկական ազդեցությունը: Թեմա 7. Գունային կոմպոզիցիայի ընդհանուր լուծման կարևորագույն գործոնները և միջոցները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Медведев В., Цветоведение и колористика. Учебное пособие, М., 2020.
2. Аксенов Ю., Левидова М., Цвет и линия, М., 1986.
3. Цветоведение и колористика. Курс лекций. — СПб.: ИПЦ СПГУТД, 2005.
4. Ильина О., Бондарева К., Цветоведение и колористика: учебное пособие / ГОУ ВПО СПБГТУРП. СПб., 2008.
5. Николай Ли, Рисунок. Основы учебного академического рисунка. Учебник, Эксмо, 2015.
6. Устин В., Композиция в дизайн, М., 2007.
7. Леонардо да Винчи, Избранные произведения, Т-1, М.-Л., Академия, 1935.
8. Степанова Н., Цвет в интерьере, К. 1985.

1. 0403/F 04	2. Նկարչություն-2	3. 9 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/շաբ.	5. 8 /82/ 0	
6. 2-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	
8. Դասընթացի նպատակն է ուսումնասիրել և նկարչության օրենքներին համապատասխան պատկերել մի քանի կենցաղային առարկաներ միասին (մեկ ամբողջության մեջ)՝ ինտերիերի հատվածում: Ուսանողներին սովորեցնել աշխատել տարբեր նյութերով, կատարել կարճատև նախանկարներ, նատյուրմորտներ, ստեղծագործական աշխատանքներ: Կատարել դիզայնի և նկարչության աշխատանք: Հորինվածքը գրագետ տեղադրել թղթում, առարկաները նկարել վերլուծական, բովանդակային մոտեցմամբ՝ զգալով գունատոնային խաղերը, առարկաները, գունային, տոնային, լուսային փոխադրությունները, անդրադարձները: Դասընթացի խնդիրները. 1. նկարչության միջոցով ուսումնասիրել մեկ կամ մի քանի առարկաների կապը միմյանց և շրջապատի հետ, 2. գծի տոնի միջոցով ցույց տալ առարկայի կառուցվածքը, 3. ուսանողներին նախապատրաստել պլեների ընթացքում էքստերիերի պատկերման, 4. սովորեցնել տաք և սառը տոների հարաբերությունների միջոցով ստանալ ծավալներ, 5. ստեղծելու սկետչ՝ ինտերիերի հատվածի և գրասենյակային առարկաների համադրությամբ, 6. ձևավորել գունատոնային ճիշտ ընկալում և վերարտադրում, տարածաձավալային մտածելակերպ, 7. սովորեցնել հորինվածքը թղթում գրագետ տեղադրելուն, 8. կատարել հորինվածքային ոճավորված աշխատանք:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն. 1. ներկայացնելու առարկաների գրագետ չափագրման և թղթի մեջ կառուցման ձևերը, 2. ներկայացնելու աշխատանքային գործընթացի հերթականությունը, 3. թվարկելու նկարչական ոճերի տարբեր տեսակները, 4. ճանաչելու գեղանկարչության տեսակները, գեղանկարչության ոճերի լավագույն համաշխարհային օրինակները, 5. ստանալու համոզիչ պատկեր՝ մեկ կամ մի քանի առարկայով՝ օգտագործելով գծանկարի հնարավորությունները, 6. յուրաքանչյուր առարկայում տեսնելու ստեղծագործական տարր՝ ներկայացնելով այն դիզայնի և նկարչության մտածելակերպով: բ. գործնական մասնագիտական կարողություններ. 1. թղթում ստանալու եռաչափ ծավալներ, 2. աշխատելու տարբեր նյութերով, 3. նկարելու նատյուրմորտներ՝ տարբեր նյութականություն ունեցող առարկաներով, 4. կատարելու ճեպանկարներ ու նախանկարներ նյութից, ստեղծելու սկետչ՝ ինտերիերի հատվածի և գրասենյակային առարկաների համադրությամբ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ. 1. վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորել հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով: 2. իրականացնելու համատեղ աշխատանք թիմում, 3. կատարելու գունային ճիշտ վերլուծություններ, 4. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույունները.		

Ա2. Ներկայացնելու դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունները, տեսությունները և մեթոդները առաջադեմ գիտելիքների հետ միասին: Բ1. Յուրաքանչյուր ստեղծագործական մոտեցում և առաջարկել ինքնուրույն լուծումներ միջավայրի, արդյունաբերական կամ հագուստի դիզայնի նախագծերի մշակման ժամանակ՝ հաշվի առնելով դիզայնի ոլորտում եղած ժամանակակից միտումները և սպառողի (պատվիրատուի) պահանջները: Բ2. Ստեղծել և վերարտադրել տեսապատկերային միջոցներ (տեսապատկերային գովազդներ)՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ և գործիքներ /գծագրություն, հեռանկար, մանրակերտի ստեղծում, ժամանակակից տառատեսակներ, լուսանկարչություն, եռաչափ մոդելավորում/: Բ3. Ինքնուրույն ընտրել դիզայն նախագծի տեխնիկական հաշվարկի եղանակներ և հիմնավորել դրանք՝ կիրառելով դիզայնում կոմպոզիցիայի վիզուալ կազմակերպման, ծավալագոյացման, ֆունկցիոնալ վերլուծության, նյութերի և դրանց արտադրության, գունանկարչության, գծանկարչության, գունատեսության, էրգոնոմիկայի, բիոնիկայի և արխիտեկտոնիկայի սկզբունքները: Բ4. Մակետավորման և մոդելավորման աշխատանքներում արհեստավարժ կիրառել քանդակի, գծանկարչության և գունանկարչության սկզբունքները և հնարները: Բ5. Դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդներ և առաջադեմ գիտելիքների հետ միասին կիրառելու սեփական գործունեությունը կազմակերպելու և մասնագիտական խնդիրները լուծելու կարողություն: Գ8. Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:	11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. խոսքային մեթոդները, 2. զննական մեթոդները, 3. գործնական մեթոդները, 4. հետաքրքրությունների խթանման մեթոդները, 5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները, 6. համագործակցային ուսուցման մեթոդները, 7. քննադատական մտածողության մեթոդները, 8. խմբային աշխատանքի մեթոդները, 9. ինքնուրույն աշխատանքի մեթոդները, 10. վերահսկողության մեթոդները: 12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Երկու ընթացիկ քննություններ՝ 9 միավոր առավելագույն արժեքով, որից՝ 1-ին ընթացիկ քննությանը տրվում է 4 միավոր: 2 միավոր տրվում է գծանկարչության լսարանային երկու առաջադրանքների համար և 2 միավոր՝ գունանկարչության լսարանային երկու առաջադրանքների համար: Միավորների քայլը 0,2 է: 2-րդ ընթացիկ քննությանը տրվում է 5 միավոր: 2 միավոր տրվում է գծանկարչության լսարանային երկու առաջադրանքների համար, 2 միավոր՝ գունանկարչության լսարանային երկու առաջադրանքների համար և 1 միավոր էսքիզավորման տեխնիկայի (սկետչ) լսարանային ժամերի շրջանակում կատարված աշխատանքների համար: Միավորների քայլը 0,2 է: Ընթացիկ ստուգումներ 8 միավոր առավելագույն արժեքով, որից 3 միավոր տրվում է գծանկարչության ընթացիկ աշխատանքներին (հանձնարարվում է թեմատիկ երկու առաջադրանք), 3 միավոր տրվում է գունանկարչության ընթացիկ աշխատանքներին (հանձնարարվում է թեմատիկ երկու առաջադրանք) և 2 միավոր՝ էսքիզավորման տեխնիկայի (սկետչ) ընթացիկ աշխատանքներին (հանձնարարվում է թեմատիկ երկու առաջադրանք): Միավորների քայլը 0,2 է: Ինքնուրույն աշխատանք՝ 3 միավոր առավելագույն արժեքով, որից 1 միավոր տրվում է գծանկարչության նախանկարների և ձեպանկարների որակյալ կատարման համար (նվազագույնը 20 նախանկար և ձեպանկար), 1 միավոր տրվում է գունանկարչության նախանկարների և ձեպանկարների որակյալ կատարման համար (նվազագույնը 20 նախանկար և ձեպանկար) և 1 միավոր՝ էսքիզավորման տեխնիկայի (սկետչ) շրջանակում կատարված նախանկարների և ձեպանկարների որակյալ կատարման համար (նվազագույնը 20 նախանկար և ձեպանկար): Միավորների քայլը 0,2 է:
--	---

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**1. Գծանկարչություն**

Թեմա 1.1. Նատյուրմորտ գիպսե զարդանախշով, մրգով՝ կտորի համադրությամբ: **Թեմա 1.2.** Նատյուրմորտ գիպսե զարդանախշով, կենցաղային իրով՝ կտորի համադրությամբ: **Թեմա 1.3.** Նատյուրմորտ ճարտարապետական ձևերի /խոյակ/ և կենցաղային առարկաների համադրությամբ: **Թեմա 1.4.** Նատյուրմորտ ինտերերի հատվածով:

2. Գունանկարչություն

Թեմա 2.1. Նատյուրմորտ գիպսե զարդանախշով և երաժշտական գործիքով՝ կտորի ծալքերի համադրությամբ:

Թեմա 2.2. Նատյուրմորտ կարպետով, կենցաղային մետաղյա և կավե առարկաներով՝ ինտերիերի հատվածում:

Թեմա 2.3. Ոճավորված նատյուրմորտ կենցաղային իրերով: **Թեմա 2.4.** Նատյուրմորտ տարբեր նյութերի առարկաներով՝ հակադիր կտորների համադրությամբ:

3. Էսքիզավորման տեխնիկա (սկետչ)

Թեմա 3.1. Պարզ կենցաղային առարկաների էսքիզավորում: **Թեմա 3.2.** Հագուստի օժանդակ տարրեր՝ արքեսուարների էսքիզավորում: **Թեմա 3.3.** Ծավալի արտահայտումը գույի միջոցով: **Թեմա 3.4.** Պարզ կենցաղային առարկաների էսքիզավորում և գույնով մշակում: **Թեմա 3.5.** Կահույքի էսքիզավորում:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Бесчастнов Н., Графика натюрморта: учеб. Пособие, М., 2008.
2. Бесчастнов Н., Графика пейзажа: учеб. Пособие, М., 2008.
3. Джованни Чиварди: Рисование. Полное руководство, М., 2015:
4. Изобразительное искусство, М., 2006.
5. Изобразительное искусство, М., 2009.
6. Искусство и ты, М., 2005.
7. Искусство вокруг нас, М., 2005.
8. Лушников Б., Рисунок. Портрет, М., 2002.
9. Ли. Н., Голова человека основы академического рисунка, Издательство: Эксмо, М., 2016 г.
10. Николай Ли, Голова человека. Основы академического рисунка, М., 2010.
11. Николай Белов: Основы техники рисунка Издательство: Харвест, Минск, 2012:
12. Кузин В., Наброски и зарисовки., М., 1981.
13. Ростовцев Н. Н., Учебный рисунок, М., 1976.
14. Ревякин П., Техника акварельной живописи, М., 2017.
15. Сергеев А., Учебный натюрморт, М., 1955.
16. Соловьев А., Смирнов Г., Алексеева Е. Учебный рисунок, М., 1967.
17. Тихонов С. В., Демьянов В. Г., Подрезков В. Б., Рисунок, М., 1978.

1. 0403/F 02	2. Նյութերի տեխնոլոգիա	3. 6 ECTS կրեդիտ
4.4 Ժամ/շաբ.	5. 30/30/0	
6.2-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ գնահատման	
8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել կերպարվեստի ոլորտում առավել հաճախ կիրառվող սարքեր-սարքավորումներին, նրանց ընտրությանը, օտգագործման և պահպանման տեխնոլոգիաներին, նյութերին, նրանց կիրառման տեխնոլոգիաներին և օրենքներին, դրանք գիտակցորեն կիրառել մասնագիտական խնդիրների ձևակերպման և լուծման ժամանակ: Դասընթացի խնդիրները. 1. գործնականում պատրաստել և կիրառել նկարչական միջոցներ ու զանազան նյութեր, 2. տարբերակել նյութերի մակնանշումները՝ ըստ տեսակների և իմանալ դրանց նշանակությունը, 3. ճանաչել ժամանակակից սարքեր և սարքավորումները և կիրառել մասնագիտական գործունեության ժամանակ:		

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և խմացություն. 1. ճանաչելու յուղային և խեժային միջոցներն ու ջրային լուծվող և գրաֆիկական նյութերը, ցուցադրելու 2. նկարչական նյութեր պատրաստելու զանազան եղանակները, 3. ճանաչելու, ընտրելու և դիզայնի տարբեր խնդիրների լուծման ընթացքում կիրառելու մանրաթելեր, թելեր և մանվածքներ, 4. ցուցադրելու բատիկի ներկեր պատրաստելու զանազան եղանակներ: բ. գործնական մասնագիտական կարողություններ. 1. կիրառելու նկարչական նյութերը և լաքերը գործնական աշխատանքների ժամանակ, 2. դիզայնի տարբեր խնդիրների լուծման համար ընտրելու յուղային և խեժային միջոցները ու ջրային լուծվող և գրաֆիկական նյութերը, 3. պատրաստելու դիզայնական աշխատանքների համար հիմնաներկեր, հիմքեր և նյութեր, 4. կիրառելու գործնական աշխատանքներում նորարարական սարքերն ու սարքավորումները, 5. դիզայնի տարբեր խնդիրների լուծման ընթացքում տարբեր եղանակներով մշակելու կաշի և փայտ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ. 1. իրականացնելու մասնագիտական ոլորտի նորարարական տեխնոլոգիաների և տեսությունների խորհրդատվություն:
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույնները. Ա2. Ներկայացնելու դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունները, տեսությունները և մեթոդները առաջադեմ գիտելիքների հետ միասին: Բ2. Ստեղծել և վերարտադրել տեսապատկերային միջոցներ (տեսապատկերային գովազդներ)՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ և գործիքներ /գծագրություն, հեռանկար, մանրակերտի ստեղծում, ժամանակակից տառատեսակներ, լուսանկարչություն, եռաչափ մոդելավորում/: Բ3. Ինքնուրույն ընտրել դիզայն նախագծի տեխնիկական հաշվարկի եղանակներ և հիմնավորել դրանք կիրառելով դիզայնում կոմպոզիցիայի վիզուալ կազմակերպման, ծավալագույացման, ֆունկցիոնալ վերլուծության, նյութերի և դրանց արտադրության, գունանկարչության, գծանկարչության, գունատեսության, էրգոնոմիկայի, բիոնիկայի և արխիտեկտոնիկայի սկզբունքները: Բ5. Դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդներ և առաջադեմ գիտելիքների հետ միասին կիրառելու սեփական գործունեությունը կազմակերպելու և մասնագիտական խնդիրները լուծելու կարողություն:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. խոսքային մեթոդները, 2. գննական մեթոդները, 3. գործնական մեթոդները, 4. հետաքրքրությունների խթանման մեթոդները, 5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները, 6. համագործակցային ուսուցման մեթոդները, 7. խմբային աշխատանքի մեթոդները, 8. ինքնուրույն աշխատանքի մեթոդները, 9. վերահսկողության մեթոդները:
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Գնահատվում է առանց ընթացիկ քննությունների գնահատման՝ առավելագույն 20 միավոր. Եզրափակիչ քննություն՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0.5: Ընթացիկ ստուգումներ 8 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0.5: Մասնակցություն՝ 3 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0.5:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Թղթեր և մատիտներ: Թեմա 2. Ջրաներկ: Թեմա 3. Գուաշ: Գուաշով աշխատանքի համար նախատեսվող: Թեմա 4. Նյութեր տեմպերայով գեղանկարչության համար: Թեմա 5. Ներկերը քսելու և խառնելու կանոններ: Թեմա 6. Գեղանկարչական յուղեր, լաքեր և նոսրացնող նյութեր: Թեմա 7. Յուղաներկով կատարված գեղանկարչական տեխնիկական թերությունները և դրանց ուղղումները: Թեմա 8. Հիմնաներկեր: Թեմա 9. Վրձիններ և ենթաշրջանակներ: Թեմա 10. Մանրաթելեր, թելեր և մանվածքներ: Թեմա 11. Դաջվածքային ներկեր: Թեմա 12. Բատիկ: Թեմա 13. Կաշվի մշակում: Թեմա 14. Փայտի մշակում:

14. Հիմնական գրականության ցանկ. 1. Ֆլյշյան Լ., Նյութերի տեխնոլոգիա, ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., 2017.: 2. Выбер Ж.А., Живопись и ее средство, Л., 1961. 3. Виннер А.Б., Как Работать над пейзажем масляными красками, М., 1987. 4. Филатов В.В., Реставрация станковой темперной живописи, М., 1986. 5. Реставрация станковой масляной живописи, ВХНРЦ, М., 1976. 6. Беленький Е.Ф, Рискин И.В, Химия и технология пигментов, Госхимиздат, Л., 1960.		
---	--	--

1. 0404/Բ 07	2. Բիոնիկա և արխիտեկտոնիկա	3. 6 ECTS կրեդիտ
4. 4 ժամ /շաբ.	5. 8/52/0	
6. 2-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	
8. Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողին արխիտեկտոնիկայի և բիոնիկայի տեսակներին, դրանց կիրառելիության հնարավորություններին, կենդանական և բուսական աշխարհի օրինակներից նոր իր ստեղծելու հնարավորություններին /կենցաղային իր, ճարտարապետական կառույց, սարք կամ սարքավորում, որոնք կունենան որոշկի ֆունկցիա/: Դասընթացի խնդիրները. 1. նոր կենցաղային իր, ճարտարապետական կառույց, էլեկտրական սարքավորում կամ նմանատիպ այլ սարքավորումներ ստեղծելու, նախագծելու ժամանակ կիրառել կենդանական կամ բուսական աշխարհի նմուշ-օրինակները կամ դրանց մասնակի հատվածները (ֆունկցիաները, տեքստուրան, ֆակտուրան), 2. ձևավորել տեսածը ճշգրիտ պատկերելու հմտություններ ուշադրություն դարձնելով հետազոտման համար ընտրված բույսի կամ կենդանու արտաքին կամ ներքին առանձնահատկություններին, ֆակտուրային, տեքստուրային, գույնին, ծավալի նուրբ երանգներին, 3. ձևավորել նոր ճարտարապետական կառույց, հանգստի միջավայր ստեղծելու, նախագծելու ու դրանք հիմնավորելու հմտություններ՝ կիրառելով բիոնիկայի և արխիտեկտոնիկայի սկզբունքները,		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ճանաչելու բիոնիկայի և արխիտեկտոնիկայի տեսակները, 2. ճանաչելու բիոնիկայի և արխիտեկտոնիկայի փոխակերպման լավագույն համաշխարհային օրինակները, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. ցանկացած նյութով կատարելու պարզ և բարդ ֆակտուրաների մշակում, 2. ստեղծելու հետաքրքիր ֆունկցիոնալ նոր իրեր /սարքեր/, 3. կատարելու և բացատրելու սեփական էսքիզներն ու բիոնիկ և արխիտեկտոնիկ փոխակերպումները, 4. դիզայնի և ճարտարապետության ոլորտում տիրապետելու բնության ձևերի կիրառման հնարավորություններին, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. վերլուծելու համաշխարհային հայտնի բիոնիկ և արխիտեկտոնիկ փոխակերպումների նմուշ-օրինակները, 2. հետևություններ անելու ուսումնասիրված օրինակների բացասական դետալների վերաբերյալ, 3. վարժ արտահայտելու/բացատրելու սեփական մտքերը/նախագծերը:		
10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույնները.</u> Ա1. Միջավայրի, արդյունաբերական և հագուստի դիզայնի խնդիրների լուծման ընթացքում ցուցաբերել գեղագիտության, արվեստի և դիզայնի տեսության ու պատմության իմացություն: Ա2. Ներկայացնելու դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունները, տեսությունները և մեթոդները՝ առաջադեմ գիտելիքների հետ միասին: Բ1. Ցուցաբերել ստեղծագործական մոտեցում և առաջարկել ինքնուրույն լուծումներ միջավայրի, արդյունաբերական կամ հագուստի դիզայնի նախագծերի մշակման ժամանակ՝ հաշվի առնելով դիզայնի ոլորտում եղած ժամանակակից միտումները և սպառողի (պատվիրատուի) պահանջները: Բ2. Ստեղծել և վերարտադրել տեսապատկերային միջոցներ (տեսապատկերային գովազդներ)՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ և գործիքներ /գծագրություն, հեռանկար, մանրակերտի ստեղծում, ժամանակակից տառատեսակներ, լուսանկարչություն, եռաչափ մոդելավորում/: Բ3. Ինքնուրույն ընտրել դիզայն նախագծի տեխնիկական հաշվարկի եղանակներ և հիմնավորել դրանք՝ կիրառելով դիզայնում կոմպոզիցիայի վիզուալ կազմակերպման, ծավալագույացման, ֆունկցիոնալ վերլուծության,		

նյութերի և դրանց արտադրության, գունանկարչության, գծանկարչության, գունատեսության, էրգոնոմիկայի, բիոնիկայի և արխիտեկտոնիկայի սկզբունքները: Բ5. Ղիգայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդներ և առաջադեմ գիտելիքների հետ միասին կիրառելու սեփական գործունեությունը կազմակերպելու և մասնագիտական խնդիրները լուծելու կարողություն: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. խոսքային մեթոդները, 2. գննական մեթոդները, 3. գործնական մեթոդները, 4. հետաքրքրությունների խթանման մեթոդները, 5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները, 6. համագործակցային ուսուցման մեթոդները, 7. քննադատական մտածողության մեթոդները, 8. ինքնուրույն աշխատանքի մեթոդները:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Երկու ընթացիկ քննություններ՝ 9 միավոր առավելագույն արժեքով. 1-ին ընթացիկին տրվում է 4 միավոր (2-ական միավոր՝ բիոնիկային և արխիտեկտոնիկային), 2-րդ ընթացիկին տրվում է 5 միավոր (2,5-ական միավոր՝ բիոնիկային և արխիտեկտոնիկային): Միավորների քայլը 0.2: Ընթացիկ ստուգումներ՝ 4 միավոր առավելագույն արժեքով (2-ական միավոր՝ բիոնիկային և արխիտեկտոնիկային): Միավորների քայլը 0.2: Ինքնուրույն աշխատանք՝ 7 միավոր առավելագույն արժեքով (3.5-ական միավոր՝ բիոնիկային և արխիտեկտոնիկային): Միավորների քայլը 0.2:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բիոնիկա Թեմա 1 Ներածություն: Բիոնիկայի տեսական ուղղությունները և նախագծային հիմունքները: Թեմա 2. Ռեալիստական պատկերում: Բիոնիկայի դերը նախագծային գործունեության ոլորտում: Թեմա 3. Ֆակտուրա, տեքստուրա: Թեմա 4. Կլաուզուրա: Բիոնիկ փոխակերպում: Արխիտեկտոնիկա Թեմա 2.1. Ռեալիստական պատկերում: Թեմա 2.2. Ֆակտուրա: Թեմա 2.3. Արխիտեկտոնիկ հորինվածքներ: Թեմա 2.4. Արխիտեկտոնիկ աշխատանքները ինտերիերում և էքստերիերում:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Архитектурная бионика. Под редакцией Ю. С. Лебедева. -М., 1990. 2. Волкотруб И. Т., Основы художественного конструирования. Моделирование материалов и биоформ. Киев, 1982. Литинецкий И. Б. Бивника. -М.: Просвещение, 1976. -336 стр. 3. Соловьев А. К., Основы архитектуры и строительных конструкций. Учебник для бакалавров, 2014. 4. Lakhmi HYPERLINK "http://science-library.at.ua/load/sistemy_iskusstvennogo_intellekta/nechetkie_sistemy_i_nechetkaja_logika/fusion_of_neural_networks_fuzzy_systems_and_genetic_algorithms_industrial_applications/4-1-0-5" C. Jain; N.M. Martin Fusion of Neural Networks, Fuzzy Systems and Genetic Algorithms: Industrial Applications. — CRC Press, CRC Press LLC, 1998.		

1. 0404/ Բ 03	2. Կումպոզիցիայի հիմունքներ	3. 3 ECTS կրեդիտ
4. 2 ժամ /շաբ.	5. 4/26/0	
6. 2-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

8. Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել կոմպոզիցիայի հիմունքներին ու տեսակներին, դրանց նախագծման էվոլյուցիային ու կիրառման հնարավորություններին: Դասընթացի հիմնական նպատակներից է դիզայներական գիտելիքների ըմբռնումն ու նախագծման հմտությունների կիրառումը: Դասընթացի խնդիրները. 1. ձևավորել կոմպոզիցիա կառուցելու հմտություն, 2. ձևավորել կոմպոզիցիայի ճիշտ տեղադրման հմտություն, 3. ձևավորել գույնով/գուաշով/աշխատելու հմտություն:
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն. 1. Ներկայացնելու կոմպոզիցիայի կառուցման և տեղադրման հիմնական մեթոդները, 2. ճանաչելու սիմետրիկ, ասիմետրիկ, դինամիկ և ստատիկ կոմպոզիցիաները, 3. բացատրելու գույների հարաբերությունները, 4. մեկնաբանելու սեփական էսքիզներն ու կոմպոզիցիաները: բ. գործնական մասնագիտական կարողություններ. 1. կատարելու պարզ և բարդ կոմպոզիցիաների կառուցումներ, 2. ստեղծելու հետաքրքիր գունային լուծումներով կոմպոզիցիաներ, 3. չափազրելու և գծագրելու ըստ մասշտաբի, 4. պատրաստելու մանրակերտ, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ. 1. կատարելու թիմային աշխատանք:
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Ա1. Միջավայրի, արդյունաբերական և հագուստի դիզայնի խնդիրների լուծման ընթացքում ցուցաբերել գեղագիտության, արվեստի և դիզայնի տեսության ու պատմության իմացություն: Ա2. Ներկայացնելու դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունները, տեսությունները և մեթոդները՝ առաջադեմ գիտելիքների հետ միասին: Բ1. Ցուցաբերել ստեղծագործական մոտեցում և առաջարկել ինքնուրույն լուծումներ միջավայրի, արդյունաբերական կամ հագուստի դիզայնի նախագծերի մշակման ժամանակ՝ հաշվի առնելով դիզայնի ոլորտում եղած ժամանակակից միտումները և սպառողի (պատվիրատուի) պահանջները: Բ2. Ստեղծել և վերաբրտադրել տեսապատկերային միջոցներ (տեսապատկերային գովազդներ)՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ և գործիքներ /գծագրություն, հեռանկար, մանրակերտի ստեղծում, ժամանակակից տառատեսակներ, լուսանկարչություն, եռաչափ մոդելավորում/: Բ3. Ինքնուրույն ընտրել դիզայն նախագծի տեխնիկական հաշվարկի եղանակներ և հիմնավորել դրանք՝ կիրառելով դիզայնում կոմպոզիցիայի վիզուալ կազմակերպման, ծավալագոյացման, ֆունկցիոնալ վերլուծության, նյութերի և դրանց արտադրության, գունանկարչության, գծանկարչության, գունատեսության, էրգոնոմիկայի, բիոնիկայի և արխիտեկտոնիկայի սկզբունքները: Բ5. Դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդներ և առաջադեմ գիտելիքների հետ միասին կիրառելու սեփական գործունեությունը կազմակերպելու և մասնագիտական խնդիրները լուծելու կարողություն: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. խոսքային մեթոդները (դասախոսությունը, բացատրումը, ներկայացումը և այլն), 2. զննական մեթոդները (գծագրերի, նկարներ ի,մակետների և զննական պարագաների դիտումն ու ցուցադրումը և այլն), 3. գործնական մեթոդները (լսարանային առաջադրանքները, տնային առաջադրանքի կատարումը և այլն), 4. հետաքրքրությունների խթանման մեթոդները (հետաքրքիր դեպքեր հայ և համաշխարհային արվեստի,դիզայնի և մշակույթի պատմությունից, արվեստագետների և դիզայներների կյանքի ներկայացմամբ հուզական խթանում և այլն), 5. համագործակցային ուսուցման մեթոդները (թիմային առաջադրանքների կատարում, խմբային ուսումնասիրություն և այլն), 6. քննադատական մտածողության մեթոդները (ինքնուրույն և տնային աշխատանքների վերլուծություններ և այլն),

7. խմբային աշխատանքի մեթոդները (մտածիր – զույգ կազմիր – քննարկիր, ձևակոյտ, ուսումնական մրցույթ և այլն), 8. ինքնուրույն աշխատանքի մեթոդները (ինքնուրույն աշխատանք սկզբնաղբյուրներով, ինտերնետային կայքերով և այլն), 9. վերահսկողության մեթոդները (գործնական, բանավոր վերահսկողություն, ծրագրավորված և ոչ ծրագրավորված և այլն):
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Երկու ընթացիկ քննություններ՝ 9 միավոր առավելագույն արժեքով, որից 1-ին ընթացիկին տրվում է 4, իսկ 2-րդին՝ 5 միավոր: Միավորների քայլը 0.2: Ընթացիկ ստուգումներ՝ 3 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0.2: Ինքնուրույն աշխատանք՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0.2:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Ներածություն: Թեմա 1. Կոմպոզիցիայի տեսակներն ու կառուցման հիմնական օրենքները: Թեմա 2. Միմետրիա-ասիմետրիա: Ստատիկա-դինամիկա: Շարժում: Թեմա 3. Հավասարակշռություն: Ռիթմ: Ռապորտ: Կոնտրաստ: Նյութան: Կոմպոզիցիայի կենտրոն: Թեմա 4. Ձևի միասնության սկզբունքները: Ամբողջականության օրենքը կոմպոզիցիայում: Թեմա 5. Գեշտալտ հոգեբանություն: Տեսողական ընկալման վերլուծականություն: Թեմա 6. Օպտիկական պատրանք, 3D պատկեր: Թեմա 7. Ստեղծագործական գործունեություն: Գեղարվեստական նոր ձևերի կազմակերպման միջոցներն ու սկզբունքները:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Թարմինյան Ն., Մեթոդական ցուցումներ, Կոմպոզիցիայի հիմունքներ, Եր., 2011: 2. Մելիքյան Ս., Կոմպոզիցիայի հիմունքներ, Եր., 2012: 3. Մելիքսեթյան Հ. Ա., Ուսումնամեթոդական ձեռնարկ, Կոմպոզիցիայի հիմունքներ, Եր., 2012: 4. Արտամանով Ա. Դ., Տեսողության պատրանքներ, Եր., 1962: 5. Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Եր., 1997: 6. Кринский В. Ф., Ламцов И. В., Туркус М. А., Элементы архитектурно-пространственной композиции-М., 1938. 7. Гусев А. Н., Общая психология: в 7 т: учебник для студ. Высш. учеб. заведения/под. ред. 8. Братуся Б. С., т 2, Ощущение и восприятие, Из. ц. «Академия», 2007. 9. Шиффман Х. Р., Ощущения и восприятие, 5-е из., 2003. 10. Маклаков А. Г., Общая психология, 2001. 11. Столяренко Л. Д., Основы психологии. Издание 3-е, переработанное и дополненное, 2000. 12. Рубинштейн С. Л., Основы общей психологии, СПб, 2000.

1. 0403/Բ 05	2. Նկարչություն – 3	3. 9 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/շաբ.	5. 10/80/0	
6. 3-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	
8. Դասընթացի նպատակն է զարգացնել տարածական ընկալում, տարբերակել լույսի և ստվերի առանձնահատկությունները: Ուսանողին հիմնադրել ձևականության, նախանկարի, կարճատև գծանկարի մեջ, որպեսզի արագ կողմնորոշվի տեսածը վերարտադրելիս: Սովորեցնել նկարել մարդու գլխի հատվածներ և վերջույթներ (նաև ինտերիերի հատվածում): Իրականացնել կանացի հագուստի սկետչ-նախագծում: Ուսանողին ծանոթացնել շրջապատող առարկաների գունային փոխազդեցություններին, նյութը տեսնելու տարածության մեջ, առաջադրանքները կատարելու վերլուծական մոտեցմամբ՝ ճիշտ ընտրելով նյութը: Նախանկարների և ձևականարների հիման վրա կատարել ազատ ստեղծագործական աշխատանք: Դասընթացի խնդիրները. 1. ձեռք բերել գծի, տոնի, անդրադարձների արագ ընկալման ունակություն, 2. տարբեր գրաֆիկական նյութերի մշակմամբ ստանալ լույսի ու ստվերի տոնայնություն, 3. կենցաղային իրերի համադրությամբ ստանալ մեկ ընդհանրական պատկեր, 4. որոշակի գրագիտությամբ մշակել առանձին դետալներ, 5. առաջադրանքից կատարել նախանկարներ, այնուհետև կատարել գրագետ կառուցում, 6. տիրապետել տարբեր նյութերի օգտագործման առանձնահատկություններին և հնարավորություններին, 7. ձևավորել գույնի, տոնի, լույսի և ստվերի, ուրվագծի տարածական մտածելակերպ,		

8. ուսանողներին նախապատրաստել պլեների ընթացքում էքստերիերի պատկերման,
9. ստեղծելու սկետչ՝ ինտերիերի հատված և հագուստ:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.

1. ներկայացնելու լույս ու ստվեր, անդրադարձներ ստանալու առանձնահատկությունները,
2. ներկայացնելու առարկան պատկերելու սեփական մոտեցումների առանձնահատկությունները,
3. թվարկելու և բնութագրելու ծավալի ստացման հիմնական միջոցները, հետազոտման ընթացքն ու արդյունքները,
4. բացատրելու գծանկարից գունանկարի անցման քայլերի հերթականությունը,
5. բնութագրելու առարկայի գունային կառուցվածքի հիմնական օրինաչափությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ.

1. գործնականում ցուցադրելու առարկաների միմյանց վրա և շրջապատի փոխազդեցությունը՝ համաչափությունների գրագետ օգտագործմամբ,
2. կիրառելու լույսի, ստվերի և ծավալի ստացման հիմնական միջոցները,
3. վերլուծելու առարկան՝ պատկերելով բնորոշ հատկությունները,
4. կառուցելու հորինվածքային պատկերներ,
5. ստեղծելու կենցաղային իրերի, զիպսե առարկաների համադրությամբ դեկորատիվ հորինվածք:
6. պատկերելու գեղանկարչական լուծումներով առարկաներ,
7. կատարելու տարբեր նյութերի տեխնիկաներով աշխատանքներ,
8. արտահայտելու ամենաթույլ երևացող տոներ և ծավալներ,
9. օգտագործելու գույնը որպես արտահայտչամիջոց,
10. կատարելու գույնի աստիճանական անցում՝ երանգների քայլերի հերթականությամբ,
11. կատարելու ինտերիերի հատվածի ազատ ստեղծագործական աշխատանք՝ նախանկարների և ճեպանկարների հիման վրա,
12. ստեղծել ինտերիերի հատվածի և հագուստի սկետչ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.

1. վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորել հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով:
2. իրականացնելու համատեղ աշխատանք թիմում,
3. կատարելու գունային ճիշտ վերլուծություններ,
4. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա2. Ներկայացնելու դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունները, տեսությունները և մեթոդները՝ առաջադեմ գիտելիքների հետ միասին:

Բ1. Ցուցաբերել ստեղծագործական մոտեցում և առաջարկել ինքնուրույն լուծումներ միջավայրի, արդյունաբերական կամ հագուստի դիզայնի նախագծերի մշակման ժամանակ՝ հաշվի առնելով դիզայնի ոլորտում եղած ժամանակակից միտումները և սպառողի (պատվիրատուի) պահանջները:

Բ2. Ստեղծել և վերաբաշխել տեսապատկերային միջոցներ (տեսապատկերային գովազդներ)՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ և գործիքներ /գծագրություն, հեռանկար, մանրակերտի ստեղծում, ժամանակակից տառատեսակներ, լուսանկարչություն, եռաչափ մոդելավորում/:

Բ3. Ինքնուրույն ընտրել դիզայն նախագծի տեխնիկական հաշվարկի եղանակներ և հիմնավորել դրանք՝ կիրառելով դիզայնում կոմպոզիցիայի վիզուալ կազմակերպման, ծավալագոյացման, ֆունկցիոնալ վերլուծության, նյութերի և դրանց արտադրության, գունանկարչության, գծանկարչության, գունատեսության, էրգոնոմիկայի, բիոնիկայի և արխիտեկտոնիկայի սկզբունքները:

Բ4. Մակետավորման և մոդելավորման աշխատանքներում արհեստավարժ կիրառել քանդակի, գծանկարչության և գունանկարչության սկզբունքները և հնարները:

Բ5. Դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդներ և առաջադեմ գիտելիքների հետ միասին կիրառելու սեփական գործունեությունը կազմակերպելու և մասնագիտական խնդիրները լուծելու կարողություն:

Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. խոսքային մեթոդները, 2. գննական մեթոդները, 3. գործնական մեթոդները, 4. հետաքրքրությունների խթանման մեթոդները, ինտերակտիվ-կառուցողական մեթոդները, 5. համագործակցային ուսուցման մեթոդները, 6. քննադատական մտածողության մեթոդները, 7. խմբային աշխատանքի մեթոդները, 8. ինքնուրույն աշխատանքի մեթոդները, 9. վերահսկողության մեթոդները:
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Երկու ընթացիկ քննություններ`</b> 9 միավոր առավելագույն արժեքով, որից` 1-ին ընթացիկ քննությանը տրվում է 4 միավոր: 2 միավոր տրվում է գծանկարչության լսարանային երկու առաջադրանքների համար և 2 միավոր` գունանկարչության լսարանային երկու առաջադրանքների համար: Միավորների քայլը 0,2 է:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննությանը</b> տրվում է 5 միավոր: 2 միավոր տրվում է գծանկարչության լսարանային երկու առաջադրանքների համար, 2 միավոր` գունանկարչության լսարանային երկու առաջադրանքների համար և 1 միավոր էսքիզավորման տեխնիկայի (սկետչ) լսարանային ժամերի շրջանակում կատարված աշխատանքների համար: Միավորների քայլը 0,2 է: Ընթացիկ ստուգումներ 8 միավոր առավելագույն արժեքով, որից 3 միավոր տրվում է գծանկարչության ընթացիկ աշխատանքներին (հանձնարարվում է թեմատիկ երկու առաջադրանք), 3 միավոր տրվում է գունանկարչության ընթացիկ աշխատանքներին (հանձնարարվում է թեմատիկ երկու առաջադրանք) և 2 միավոր էսքիզավորման տեխնիկայի (սկետչ) ընթացիկ աշխատանքներին (հանձնարարվում է թեմատիկ երկու առաջադրանք): Միավորների քայլը 0,2 է: Ինքնուրույն աշխատանք`</b> 3 միավոր առավելագույն արժեքով, որից 1 միավոր տրվում է գծանկարչության նախանկարների և ձեպանկարների որակյալ կատարման համար (նվազագույնը 20 նախանկար և ձեպանկար), 1 միավոր տրվում է գունանկարչության նախանկարների և ձեպանկարների որակյալ կատարման համար (նվազագույնը 20 նախանկար և ձեպանկար) և 1 միավոր` էսքիզավորման տեխնիկայի (սկետչ) շրջանակում կատարված նախանկարների և ձեպանկարների որակյալ կատարման համար (նվազագույնը 20 նախանկար և ձեպանկար): Միավորների քայլը 0,2 է:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. 1. Գծանկարչություն Թեմա 1.1. Մարդու գլխի կառուցվածքի հատվածային ուսումնասիրություն /շուրթեր, քիթ, ականջ, աչք/: Թեմա 1.2. Մարդու մարմնի մասերի ուսումնասիրություն /գլխի ձեռք, ոտքի թաթ/: Թեմա 3. Մարդու գլխի մարմնի մասերով հորինված նատյուրմորտ ինտերիերում` կտորի համադրությամբ: <b>Թեմա 4.</b> Բնության ձևերի ուսումնասիրություն:</p> <p><b>2. Գունանկարչություն</b></p> <p><b>Թեմա 2.1.</b> Նատյուրմորտ լսարանի որևէ անկյունում` աթոռի վրա դրված, մրգերով, սենյակային բույսերով, ծալքի համադրությամբ: Թեմա 2.2. Նատյուրմորտ գլխի խոյակով, գրքով, գրենական պիտույքներով, ծալքի համադրությամբ: Թեմա 2.3. Ոճավորված աշխատանք` մարդու գլխի մարմնի մասերով, մրգերով, գունեղ ծալքերի համադրությամբ: Թեմա 2.4. Կատարել ինտերիերի ստեղծագործական հորինվածքային աշխատանք: 3. Էսքիզավորման տեխնիկա (սկետչ) Թեմա 3.1. Բարդ կենցաղային առարկաներ: Բարդ կենցաղային առարկաների կառուցման սկզբունքների ուսումնասիրություն: Թեմա 3.2. Բարդ կենցաղային առարկաների էսքիզավորում և ծավալի արտահայտումը գույնի միջոցով: Թեմա 3.3. Բարդ կենցաղային առարկաների էսքիզավորում (արդյունաբերական առարկաներ, կահույք, հագուստի օժանդակ տարրերը` արքեսուարներ): Թեմա 3.4. Բարդ կենցաղային առարկաների էսքիզավորում: Աշխատանքի շարունակություն և ամփոփում:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Учебный рисунок в академии художеств, М., 1990. 2. Барщ А., Наброски и зарисовки, М., 1970. 3. Бесчастнов Н. П., Изображение растительных мотивов, М., 2004. 4. Николай Белов: Основы техники рисунка Издательство: Харвест, Минск, 2012: 5. Джованни Чиварди: Рисование. Полное руководство, М., 2015:

6. Лушников Б. В., Рисунок. Портрет, М., 2002.
7. Рисунок в Академии художеств. Альбом, М., 1990.
8. Ревакин П., Техника акварельной живописи, М., 2017.
9. Сергеев А., Учебный натюрморт. М., 1955.

1.0202/ Բ 36	2. Արվեստի պատմության-1	3. 6. ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 52/0/8	
6. 3-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ գնահատման	
8. Դասընթացի նպատակն է՝ ▪ ուսանողներին ծանոթացնել արվեստի առաջացման, զարգացման օրինաչափությունների, նախնադարյան, Հին Եգիպտոսի, Միջագետքի երկրների, Հին Իրանի, Հին Հռոմի ու Հունաստանի, միջնադարյան Եվրոպայի, Հին և միջնադարյան Հայաստանի մշակույթների պատմության, կրոնա-դիցաբանության, համաշխարհային գեղարվեստական համապատկերում դրանցից յուրաքանչյուրի ներդրման և փոխառանջությունների հետ, ▪ ուսանողներին սովորեցնել և հասու դարձնել միջնադարյան արվեստի տիպաբանությանը, դրա գեղարվեստական առանձնահատկություններին, ապա հետևել դրա տարբեր դրսևորումներին՝ սկսած Արևմտյան Եվրոպայից մինչև հարավային ու արևելյան Ասիայի երկրներ և Հայաստան, ▪ ուսանողներին ներկայացնել բյուզանդական արվեստի պատմությունը, ուսուցանել քրիստոնեական արվեստի սիմվոլիկ և կանոնիկ բնույթից բխող պատկերագրության հիմունքները, ներկայացնել արևմտաքրիստոնեական արվեստի պատմությունը, ոճերը, իսլամական արվեստը, ▪ ուսանողներին ծանոթացնել Վանի թագավորության, հին հայկական և միջնադարյան քաղաքաշինությանը, ճարտարապետությանը, որմնանկարչությանը, կիրառական արվեստներն, պատկերացում ձևավորել հայկական վաղ միջնադարյան պաշտամունքային շինությունների տիպերի, միջնադարյան ճարտարապետական դպրոցների և վանական համալիրների մասին, ▪ ուսանողներին ծանոթացնել Հայաստանի և հայկական գաղթօջախների արվեստին, հանրահայտ արվեստագետների ստեղծագործություններին: Դասընթացի խնդիրները. 1. ուսանողներին ներկայացնել «Արվեստի պատմություն-1» առարկայի բովանդակությունը և աջակցել յուրացնելու այն: 2. ուսումնասիրել արվեստի պատմության օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները, փուլերը: 3. ուսանողներին դարձնել հիշյալ երկրների կարևոր հուշարձանների հաղորդակիցը իյուստրատիվ նյութի, տեսաֆիլմերի, ինչպես նաև թանգարաններ այցելությունների հիման վրա: 4. ուսանողների մոտ ձևավորել լսարանային և արտալսարանային աշխատանքների պլանավորում, ստուգումներ նյութի ուսումնասիրության ընթացքում (սեմինարներ, ինքնուրույն աշխատանքներ, ցուցահանդեսների, պատմական հուշարձանների այցելություն և այլն): 9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն. 1. ներկայացնելու հայ և համաշխարհային արվեստի պատմության օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները, տալու արվեստի սահմանումը, թվարկելու արվեստի տեսակները, ոճերը, 2. բացատրելու արևելյան երկրների, անտիկ աշխարհի, Հայաստանի դիցաբանությունը, թվարկելու համաշխարհային և ազգային կրոնները, բացահայտելու արվեստի հետ դրանց կապը, 3. թվարկելու նշված երկրների արվեստների առավել հայտնի հուշարձանները և հայտնի վարպետների ստեղծագործությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ. 1. վերլուծելու նշված երկրների արվեստների խնդիրները, 2. գնահատելու տարբեր երկրների արվեստների գլխավոր առանձնահատկությունները, բնորոշ գծերը, 3. տեսանյութերի, կարճամետրաժ ֆիլմերի և իյուստրատիվ նյութերի միջոցով ցուցադրելու և վերլուծելու համաշխարհային հռչակ վայելող ստեղծագործությունները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ. 1. բացահայտելու տարբեր երկրների արվեստների տեղը և դերը համաշխարհային արվեստի մեջ, 2. գնահատելու արվեստի գործերի գեղարվեստական արժեքը, 3. աշխատելու թիմում:		

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույթները. Ա1. Միջավայրի, արդյունաբերական և հագուստի դիզայնի խնդիրների լուծման ընթացքում ցուցաբերել գեղագիտության, արվեստի և դիզայնի տեսության ու պատմության իմացություն: Բ1. Ցուցաբերել ստեղծագործական մոտեցում և առաջարկել ինքնուրույն լուծումներ միջավայրի, արդյունաբերական կամ հագուստի դիզայնի նախագծերի մշակման ժամանակ՝ հաշվի առնելով դիզայնի ոլորտում եղած ժամանակակից միտումները և սպառողի (պատվիրատուի) պահանջները: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, դեկլարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • խոսքային մեթոդները (դասախոսություն, բացատրում, պատմում և այլն), • գննական մեթոդները (դիդակտիկ նյութերի ցուցադրում, դիտում և այլն), • գործնական մեթոդները (ինքնուրույն առաջադրանքի կատարում և այլն), • ճանաչողական-ստեղծագործական մեթոդները (բացատրական-ցուցադրական, պրոբլեմային-որոնողական), • ինտերակտիվ-կառուցողական մեթոդները (բանավեճ, աշխատանք բնագրի հետ և այլն):
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Գնահատվում է առանց ընթացիկ քննությունների գնահատման՝ առավելագույն 20 միավոր՝ Եզրափակիչ քննություն՝ 9 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է: Ինքնուրույն աշխատանք՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է: Ընթացիկ ստուգում՝ 3 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. 1. Համաշխարհային արվեստի պատմություն. Թեմա 1.1. Ներածություն: Նախնադարյան արվեստ: Թեմա 1.2. Հին Եգիպտոսի արվեստը: Թեմա 1.3. Միջագետքի երկրների արվեստը: Թեմա 1.4. Հին Իրանի արվեստը: Թեմա 1.5. Կրետե-Միկենյան արվեստ: Թեմա 1.6. Հին Հունաստանի արվեստը. Հոմերոսյան շրջան, Արիստիկ շրջան, Դասական շրջան, Հելլենիզմ: Թեմա 1.7. Հին Հռոմի արվեստը. հանրապետական շրջան, կայսերական շրջան, ուշ հռոմեական շրջան: Թեմա 1.8. Միջնադարյան արվեստ. Բյուզանդիայի արվեստը: Թեմա 1.9. Արևմտյան Եվրոպայի միջնադարյան արվեստը. ռոմանական և գոթական արվեստ: Թեմա 1.10. Ռուսաստանի միջնադարյան արվեստը: Թեմա 1.11. Իսլամական արվեստ: Թեմա 1.12. Հարավային և արևելյան Ասիայի երկրների հին և միջնադարյան արվեստը. Չինաստան, Ճապոնիա, Հնդկաստան: 2. Հայ արվեստի պատմություն. Թեմա 2.1. Հայկական լեռնաշխարհի հնագույն արվեստը /սկզբնավորումից-մինչև մ.թ.ա. 10-րդ դար/: Թեմա 2.2. Արարատյան թագավորության /Ուրարտուի/ արվեստը մ.թ.ա. 9-6-րդ դդ.: Թեմա 2.3. Հելլենիստական Հայաստանի արվեստը / մ. թ. ա. 2-մ. թ. 3-րդ դդ./: Թեմա 2.4. Հայաստանի արվեստը վաղ միջնադարում /4-7-րդ դդ. ճարտարապետություն, քանդակագործություն, գեղանկարչություն/: Թեմա 2.5. Հայաստանի արվեստը զարգացած միջնադարում /ճարտարապետական դպրոցներ և ճարտարապետներ, խաչքարային արվեստ, վանքային համալիրներ, դեկորատիվ-կիրառական արվեստներ/: Թեմա 2.6. Կիլիկիայի հայկական թագավորության արվեստը /ճարտարապետության, մանրանկարչության նշանավոր կենտրոնները, առավել նշանավոր վարպետներ/: Թեմա 2.7. Հայկական գաղթօջախների արվեստը /Վրաստան, Դրիմ, Լեհաստան, Ուկրաինա, Ռուսաստան, Իրան/: Թեմա 2.8. Հովնաթանյաններ:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Հակոբյան Հ., Հասրաթյան Վ., Համաշխարհային և հայ պատմության ուղեցույց, Եր., 2005: 2. Կուզմինա Մ., Մայցևա Ն., Արտասահմանյան արվեստի պատմություն, Եր., 2003: 3. Աղասայան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ., Հայ արվեստի պատմություն, Եժ, 2009: 4. Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Համաշխարհային և հայ պատմության ուղեցույց, Եր., 2005: 5. Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Եժ, 1985: 6. Թորոմանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմություն, հ.2, Եր., 1942: 7. Մարտիրոսյան Ե., Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Ա, Բ, Գ, Եր., 1971-1978: 8. Հակոբյան Հ., Կորիմազյան Է., Հայկական մանրանկարչություն, Եր., 1987: 9. Колпинский Ю. Д., Памятники мирового искусства, т. 1, 2, 3, М., 1971.

1. 0404/Բ 08	2. Համակարգչային գրաֆիկա և եռաչափ մոդելավորում -1	3. 6 ECTS կրեդիտ
4.4 Ժամ/շաբ.	5. 20/40/ 0	
6. 3- րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	
8. Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել մասնագիտական խնդիրները լուծելիս օգտվել համակարգչային գրաֆիկայի /Corel Draw/ և AutoCAD (2D) ծրագրերի հնարավորություններից, կատարել ցանկացած բարդության աշխատանքներ: Դասընթացի խնդիրները. 1. սովորեցնել Corel Draw, AutoCAD ծրագրերի գործիքակազմին, 2. կիրառել պատտանների, գրքերի կազմի նախագծում, 3. ստեղծել տեքստային ոճեր, 4. սովորեցնել նախագծել, չափագրել և գունավորել 2D պատկերներ, 5. աջակցել ստեղծելու անհատական նախագծեր՝ Corel Draw և AutoCAD ծրագրի օգնությամբ:		
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու Corel Draw և AutoCAD ծրագրերի գործիքակազմը դրանց կիրառությունը, նպատակը, գործառնությունները, 2. անհատական նախագծեր կազմելու ժամանակ ընտրելու և բացատրելու Corel Draw և AutoCAD ծրագրերի գործիքակազմի ընտրությունը բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Corel Draw ծրագրի օգնությամբ կատարելու պարզ և բարդ կոմպոզիցիաների կառուցումներ, 2. Corel Draw ծրագրի օգնությամբ պատրաստելու և ներկայացնելու անհատական նախագծեր, 3. 2D ծրագրի օգնությամբ նախագծելու, չափագրելու և գունավորելու պատկերներ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ. 1. աշխատելու թիմում և լուծելու բարդ խնդիրներ, 2. կատարելու ինքնուրույն և խմբային աշխատանքներ, կատարելու դրանց վերլուծություններ և ներկայացնելու եզրակացություններ, 3. զարգացնելու սեփական ընդունակությունները, կարողությունները, 4. կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույնները. Ա1. Միջավայրի, արդյունաբերական և հագուստի դիզայնի խնդիրների լուծման ընթացքում ցուցաբերել գեղագիտության, արվեստի և դիզայնի տեսության ու պատմության իմացություն: Ա2. Ներկայացնելու դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունները, տեսությունները և մեթոդները՝ առաջադեմ գիտելիքների հետ միասին: Բ1. Ցուցաբերել ստեղծագործական մոտեցում և առաջարկել ինքնուրույն լուծումներ միջավայրի, արդյունաբերական կամ հագուստի դիզայնի նախագծերի մշակման ժամանակ՝ հաշվի առնելով դիզայնի ոլորտում եղած ժամանակակից միտումները և սպառողի (պատվիրատուի) պահանջները: Բ2. Ստեղծել և վերարտադրել տեսապատկերային միջոցներ (տեսապատկերային գովազդներ)՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ և գործիքներ /գծագրություն, հեռանկար, մանրակերտի ստեղծում, ժամանակակից տառատեսակներ, լուսանկարչություն, եռաչափ մոդելավորում/: Բ3. Ինքնուրույն ընտրել դիզայն նախագծի տեխնիկական հաշվարկի եղանակներ և հիմնավորել դրանք՝ կիրառելով դիզայնում կոմպոզիցիայի վիզուալ կազմակերպման, ծավալագոյացման, ֆունկցիոնալ վերլուծության, նյութերի և դրանց արտադրության, գունանկարչության, գծանկարչության, գունատեսության, էրգոնոմիկայի, բիոնիկայի և արխիտեկտոնիկայի սկզբունքները: Բ5. Դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդներ և առաջադեմ գիտելիքների հետ միասին կիրառելու սեփական գործունեությունը կազմակերպելու և մասնագիտական խնդիրները լուծելու կարողություն: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. խոսքային մեթոդները (դասախոսությունը, բացատրումը, ներկայացումը, ընթերցումը, երկխոսությունը), 2. գնական մեթոդները (գծագրերի, նկարների և գնական պարագաների դիտումն ու ցուցադրումը), 3. գործնական մեթոդները (առաջադրանքները, վարժությունները, տնային առաջադրանքի կատարումը), 4. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները (խճանկար, ուսումնական բանավեճ, աշխատանք		

սկզբնաղբյուրների հետ), 5. քննադատական մտածողության մեթոդները (տնային աշխատանքների վերլուծություններ), 6. ինքնուրույն աշխատանքի մեթոդները (ինքնուրույն աշխատանք սկզբնաղբյուրներով, ինտերնետային կայքերով):		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Երկու ընթացիկ քննություններ՝ 8 միավոր յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով: 1-ին ընթացիկ քննություն- առավելագույնը 4 միավոր՝ 2 միավորը ուսանողը վաստակում է մինչև ընթացիկ քննությունը պլանավորված գործնական առաջադրանքներից, 2 միավոր քննական հարցատոմսերից: Միավորների քայլը 0.5 միավոր է: 2-րդ ընթացիկ քննություն- առավելագույն 4 միավոր՝ 2 միավորը ուսանողը վաստակում է մինչև ընթացիկ քննությունը պլանավորված գործնական առաջադրանքներից, 2 միավոր քննական հարցատոմսերից: Միավորների քայլը 0.5 միավոր է: Ինքնուրույն աշխատանք՝ գնահատվում է 4 միավոր, որը ուսանողը վաստակում է կիսամյակի ընթացքում կատարած ինքնուրույն առաջադրանքների հիման վրա: Միավորների քայլը 0.5 միավոր է: Եզրափակիչ քննություն՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:		
11. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Corel Draw և AutoCAD ծրագրերի գործիքակազմի ուսումնասիրում: Ծրագրի աշխատանքային բոլոր գործիքների կիրառությունը, նպատակը, գործառնությունները: Թեմա 2. Այցեքարտի և տարբերանշանի դիզայն: Թեմա 3. Գրքի կազմի ձևավորում: Թեմա 4. Պաստառի էքսիզներ և նախագիծ: Թեմա 5. Հատակագծերի պրոյեկցիաների կառուցում: Թեմա 6. Տարբեր բարդության պատկերների 2D նախագծում, չափագրում և գունավորում: Թեմա 7. Նախագծված աշխատանքների համակարգում, տպագրում և հիշում տարբեր ձևաչափերով: Թեմա 8. Առարկայի չափագրում և կառուցում:		
14. Հիմնական գրականության ցանկ 1. Райман М., Самоучитель Auto CAD, 2014. 2. Полещук Н. Н., Самоучитель Auto CAD, 2014. 3. Мохов И. С., Самоучитель Auto CAD, 2014. 4. Линн А., Полезные советы Auto CAD. 5. Жаров Н., Полное руководство Auto CAD, 2012. 6. Сазонов А., Трехмерное моделирование в Auto CAD, 2011. 7. Free Vectors, Stock Photos & PSD Downloads Freepik 8. Download Free Pictures & Images [HD] Unsplash 9. Wood Texture Photos, Download Free Wood Texture Stock Photos & HD Images (pexels.com) 10. Millions of PNG Images, Backgrounds and Vectors for Free Download Pngtree 11. 870000+ Png Images, Free Transparent Images Download - Lovepik 12. Color Trends + Palettes :: COLOURlovers 13. Design Seeds (design-seeds.com) 14. Search Projects Photos, videos, logos, illustrations and branding on Behance 15. Browse Fonts - Google Fonts 16. Free Fonts 99,000+ Font Downloads FontSpace 17. https://photoshop-master.ru/articles/ 18. https://ru.freepik.com/ 19. http://www.pexels.com/		

1. 0404/ Բ	2. Օրնամենտալ ոճավորում	3. 3 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 4/26/0	
6. 3-րդ կիսամյակ	7. Առանց էզրափակիչ գնահատման	

8. Դասընթացի նպատակն է Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել օրնամենտալ ոճավորման սկզբունքներին, կոմպոզիցիայի տեսակներին, դրանց նախագծման ու կիրառման հնարավորություններին, օրնամենտալ ոճավորման և նախագծման հմտությունների կիրառմանը: Դասընթացի խնդիրները. 1. ձևավորել կոմպոզիցիա կառուցելու հմտություն, 2. ձևավորել կոմպոզիցիայի ճիշտ տեղադրման հմտություն, 3. ձևավորել գույնով/գուաշով/աշխատելու հմտություն: 4. գծագրերում և գործնական աշխատանքներում կիրառելու գծագրության, կոմպոզիցիայի հիմունքների, գունատեսության գիտելիքները:
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն. 1. ճանաչելու կոմպոզիցիայի կառուցման և տեղադրման հիմնական մեթոդները, 2. ճանաչելու սիմետրիկ, ասիմետրիկ, դինամիկ և ստատիկ կոմպոզիցիաները, 3. ճանաչելու և տարբերակելու օրնամենտներն ըստ ոճերի, 4. բացատրելու գույների հարաբերությունները, 5. մեկնաբանելու սեփական էսքիզներն ու կոմպոզիցիաները: բ. գործնական մասնագիտական կարողություններ. 1. կատարելու պարզ և բարդ կոմպոզիցիաների կառուցումներ 2. ստեղծելու հետաքրքիր գունային լուծումներով կոմպոզիցիաներ, 3. ստեղծելու և ոճավորելու հետաքրքիր կառուցվածքով երկրաչափական օրնամենտներ, 4. չափագրելու և գծագրելու ըստ մասշտաբի, 5. պատրաստելու մանրակերտ, 6. կատարելու և ոճավորելու նախանկարներ, 7. նկարելու ապակու տարբեր հարթությունների վրա՝ օգտագործելով համապատասխան հորինվածքային պատկեր, 8. գործնականում կիրառելու և՛ ազգային և՛ այլ ժողովուրդների զարդամոտիվները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ. 1. կատարելու թիմային աշխատանք:
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Ա2. Ներկայացնելու դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունները, տեսությունները և մեթոդները՝ առաջադեմ գիտելիքների հետ միասին: Բ3. Ինքնուրույն ընտրել դիզայն նախագծի տեխնիկական հաշվարկի եղանակներ և հիմնավորել դրանք՝ կիրառելով դիզայնում կոմպոզիցիայի վիզուալ կազմակերպման, ծավալագույացման, ֆունկցիոնալ վերլուծության, նյութերի և դրանց արտադրության, գունակարչության, գծանկարչության, գունատեսության, էրգոնոմիկայի, բիոնիկայի և արխիտեկտոնիկայի սկզբունքները: Բ5. Դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների, մեթոդներ և առաջադեմ գիտելիքների հետ միասին կիրառելու սեփական գործունեությունը կազմակերպելու և մասնագիտական խնդիրները լուծելու կարողություն: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. խոսքային մեթոդները (դասախոսությունը, բացատրումը, ներկայացումը և այլն), 2. զննական մեթոդները (գծագրերի, նկարների ի, մակետների և զննական պարագաների դիտումն ու ցուցադրումը և այլն), 3. գործնական մեթոդները (լսարանային առաջադրանքները, տնային առաջադրանքի կատարումը և այլն), 4. խմբային աշխատանքի մեթոդները (մտածիր – գույգ կազմիր – քննարկիր, ձևակույտ, ուսումնական մրցույթ և այլն), 5. ճանաչողական-ստեղծագործական մեթոդները (բացատրական-ցուցադրական, պրոբլեմային-որոնողական), 6. ինքնուրույն աշխատանքի մեթոդները (ինքնուրույն աշխատանք սկզբնաղբյուրներով, ինտերնետային կայքերով և այլն), 7. վերահսկողության մեթոդները (գործնական, բանավոր վերահսկողություն, ծրագրավորված և ոչ ծրագրավորված և այլն):

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Երկու ընթացիկ քննություններ՝ 9 միավոր առավելագույն արժեքով, որից 1-ին ընթացիկին տրվում է 4, իսկ 2-րդին՝ 5 միավոր: Միավորների քայլը 0,2 է:

Ինքնուրույն աշխատանք՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,2 է:

Ընթացիկ ստուգումներ՝ 3 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,2 է:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Ներածություն: Թեմա 1. Օրնամենտ: Օրնամենտի դերն ու գործառույթը որպես արտահայտչական միջոց:

Թեմա 2. Երկրաչափական օրնամենտի կառուցման սկզբունքը՝ կետ, գիծ, մարմին: Օրնամենտալ շրջան: Ցանցային կառուցում: **Թեմա 3.** Օրնամենտալ մարմինների գծապատկերների ծավալաձևերի և գունահարաբերումների պայմանական ձևերի կիրառումը ռճավորման մեջ: **Թեմա 4.** Ռճավորումը որպես հորինվածքի ռիթմիկ կազմակերպման օրինաչափ մեթոդ: **Թեմա 5.** Օրնամենտի առանձնահատկությունը մակերեսի և նյութի պարտադիր կապի կառուցողական տրամաբանության մեջ: **Թեմա 6.** Ստեղծագործական գործունեություն: Գեղարվեստական նոր ձևերի կազմակերպման միջոցներն ու սկզբունքները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Հրայր (Բագե) Խաչերյան, Արմեն Քյուրքչյան, «Հայկական զարդարվեստ», Եր. , 2012 թ.:
2. Մնացականյան Ա., Հայկական զարդարվեստ, Եր. , ՀՀԳԱԱ 1956թ.:
3. Братуся Б. С., т 2, Ощущение и восприятие, Изд. ц. «Академия», 2007.
4. Кринский В. Ф., Ламцов И. В., Туркус М. А., Элементы архитектурно-пространственной композиции- М.,1938.
5. Чернихов Я., Орнамент, композиционно-классические построения, 1931.

1. 0403/B29	2. Նկարչություն – 4	3. 9 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/շաբ.	5. 10/80/0	
6. 4-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	
8. Դասընթացի նպատակն է ծանոթանալ գանգի, տաշվածքով գիպսե զլխի անատոմիական կառուցվածքին, ուսանողներին սովորեցնել նկարել մարդու գանգ, տաշվածքով և անատոմիական գլուխ, կատարել դիզայներական ուղղվածությամբ նախագծեր, ինտերիերի նախանկարներ: Ուսանողներին սովորեցնել իրենց աշխատանքների վերաբերյալ կատարելու քննակումներ, վերլուծություններ՝ առաջադրանքները հասցնելով տրամաբանական ավարտին: Մի քանի առարկաներով կատարելու ստեղծագործական աշխատանքներ, քաղաքային կամ գյուղական պատկերներով ձևավորել էքստերիեր, կատարել ինտերիերի հատվածի սկետչ: Դասընթացի խնդիրները. 1. գծանկարի միջոցով կատարել նախանկարներ և ճեպանկարներ, 2. ուսումնասիրել հեռանկարը, լույսը, ստվերը, գիծը, տոնը՝ որպես ամբողջական միջավայր, 3. ուսումնասիրվող իրերի համադրությամբ ստանալ մեկ ընդհանրական պատկեր՝ հորինվածքային-դեկորատիվ աշխատանք: 4. սովորեցնել աշխատել տարբեր նյութերով, 5. գունախաղի տաք և սառը տոների միջոցով ստանալ եռաչափ տարածություն, 6. ուսանողներին նախապատրաստել պլեների ընթացքում էքստերիերի պատկերման, 7. ստեղծելու ինտերիերի հատվածի սկետչ:		

